



European Environment Agency



Եվրոպայի հարևանության քաղաքականության մեխանիզմ

Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի
ձևավորում առաջնահերթ տվյալների հոսքերի համար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Ապրիլ 2014թ.
Երևան, Հայաստան

Բովանդակություն

Հապավումների ցանկ	2
Ներածություն	3
Գլուխ 1. Առաջնային տվյալների համախումբ ու թեմատիկ ոլորտներ	5
1.1. Օդի որակ	6
1.1.1. Ծծմբի երկօքսիդի (SO ₂) արտանետումներ	7
1.1.2. Ազոտի օքսիդների (NO _x) արտանետումներ	10
1.1.3. Քաղաքներում ազոտի երկօքսիդի (NO ₂) միջին կոնցենտրացիա	14
1.2. Կլիմայի փոփոխություն	16
1.2.1. Օգոն քայքայող նյութերի սպառում	16
1.2.2. Ջերմոցային գազերի արտանետումներ	18
1.3. Թափոններ	20
1.3.1. Քաղաքային թափոններ	21
1.4. Ջրի որակ	22
1.4.1. Գետերում ԹԿՊ ₅ -ի կոնցենտրացիա	23
1.4.2. Գետերում ամոնիումային ազոտի կոնցենտրացիա	27
1.4.3. Ջրային մարմիններում (լճեր, ջրամբարներ) նիտրատի կոնցենտրացիա	27
1.4.4. Ջրային մարմիններում ընհանուր ֆոսֆորի կոնցենտրացիա	27
1.5. Կենսաբազմազանություն	29
1.5.1. Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ըստ կատեգորիաների)	29
1.6. Եզրահանգումներ տվյալների հավաքածուների վերաբերյալ	32
Գլուխ 2. ՇՄՏՄՀ-ին համադրելի ազգային համակարգերի մշակում	33
Գլուխ 3. Միջոցառումների ծրագիր	35
3.1 Տվյալների ընտրված հավաքածուների ՇՄԵԳ միջոցով փոխանակման համար առաջարկվող քայլեր	35
3.2 Հայաստանում ՇՄՏՄՀ կառուցվածքների ու համակարգերի զարգացման երկարաժամկետ կարիքներ	36

Հապավումների ցանկ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՏՀ	Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր
ԲՊՀ	Բնապահպանության նախարարություն
ԲՊՏ	Բնապահպանական պետական տեսչություն
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՀՔՄ	Եվրոպայի հարևանության քաղաքականության մեխանիզմ
ԵՄ	Եվրոպական միություն
ԹԿՊ	Թթվածնի կենսաբանական պահանջարկ
ԿԲԿ	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա
ԿԿԳ	Կենսառեսուրսների կառավարման գործակալություն
ԿՓՇԿ	Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա
ՄԱ ԵՏՀ	Միացյալ ազգերի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
ՄԱԶԾ	Միացյալ ազգերի զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՄՎԿ	Միջպետական վիճակագրական կոմիտե
ՇՄԵԳ	Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության
ՇՄՆՄԿ	Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն
ՇՄՏՄՀ	Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգ
ԶԳ	Զերմոցային գազեր
ԶՊԿ	Զրային պետական կադաստր
ԶՌԿԳ	Զրային ռեսուրսների կառավարման գործակալություն
ՊՈԱԿ	Պետական ոչ արևտրային կազմակերպություն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՎՊԽ	Վիճակագրության պետական խորհուրդ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության
ՕԱՀԱԿ	Օդի անդրսահմանային հեռահար աղտոտման մասին կոնվենցիա

Ներածություն

Սույն հաշվետվությունը մշակվել է Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության (ՇՄԵԳ) ֆինանսավորմամբ “Zoi բնապահպանական ցանց” կազմակերպության կողմից իրականացվող Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգի (ՇՄՏՄՆ) ստեղծմանն ուղղված ծրագրի շրջանակներում: Հաշվետվության մշակմանը ներդրում են ունեցել նաև ՇՄՏՄՆ ազգային համակարգողները և Հայաստանի հիմնական շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները:

2010թ.-ին նոյեմբերին մեկնարկեց Եվրոպայի հարևանության քաղաքականության մեխանիզմ (ԵՀՔՄ)-ՇՄՏՄՆ ծրագիրը՝ աջակցելու ԵՀՔՄ երկրներին բարելավելու և առավել լավ կառավարելու շրջակա միջավայրի մոնիտորինգը, տվյալների հավաքագրումը և հաշվետվությունների ներկայացումը, ինչպես նաև աստիճանաբար ընդլայնելու ՇՄՏՄՆ սկզբունքների կիրառումը: ԵՀՔՄ-ՇՄՏՄՆ ծրագրի համընդհանուր նպատակն է խթանել ԵՀՔՄ երկրներում շրջակա միջավայրի պահպանությունը: Առանձին նպատակները ներառում են շրջակա միջավայրի ցուցանիշների բացահայտումը և հետագա մշակումը, շրջակա միջավայրի բնագավառում մոնիտորինգի, տվյալների հավաքագրման, պահպանման գնահատման և հաշվետվողականության կարողությունների հզորացումը, ՇՄՏՄՆ սկզբունքներին համահունչ շրջակա միջավայրի ազգային և տարածաշրջանային տեղեկատվական համակարգերի զարգացումը, ՇՄՏՄՆ հիմնումը և տարածաշրջանային նախաձեռնություններում առաջընթացին հետևելը:

ՇՄՏՄՆ-ի սկզբունքները սահմանում են, որ տեղեկատվությունը պետք է.

- կառավարվի տվյալների աղբյուրին հնարավորինս մոտ,
- հավաքագրվի մեկ անգամ և տրամադրվի շատերին՝ բազմանպատակ օգտագործման համար,
- մատչելի լինի՝ հաշվետվությունների վերաբերյալ պարտավորությունների կատարումը հեշտացնելու համար,
- հեշտությամբ մատչելի լինի բոլոր օգտագործողներին,
- առկա լինի՝ հնարավորություն տալու համեմատել շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչները համապատասխան աշխարհագրական տեղանքում կամ մասշտաբով,
- ազգային մակարդակով ամբողջովին հասանելի լինի լայն հանրության համար՝ համապատասխան պետական լեզվով,
- հնարավոր լինի օգտագործել լայնորեն տարածված, անվճար և բաց ծրագրային ստանդարտների միջոցով:

ԵՀՔՄ-ՇՄՏՄՆ ծրագրին Հայաստանի մասնակցությունը հնարավորություն է տալիս ավելացնել տվյալների օգտագործման ճկունությունը և շրջանակը, պարզեցնել և արդյունավետ դարձնել տվյալների հոսքը, տեղեկատվությունը լայնորեն հասանելի դարձնել, ստանալ տվյալների և տեղեկատվության առավել համադրելի և համապարփակ համակարգ: Ծրագիրն աշխատում է ազգային մակարդակով շրջակա միջավայրի և վիճակագրության համար պատասխանատու կազմակերպությունների՝ ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ, որոնք ԵՀՔՄ շրջանակներում պատասխանատու են շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության և տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման և տարածման համար: Այն օգնում է հզորացնել համապատասխան լիազոր մարմինների կարողությունները՝ շրջակա միջավայրի վերաբերյալ համագործակցության, կապերի հաստատման, մոնիտորինգի, տվյալների կառավարման, գնահատման և ցուցանիշների հիման վրա հաշվետվությունների ներկայացման ոլորտներում:

Սույն հաշվետվության նպատակն է աջակցել Հայաստանում ՇՄՏՄՀ իրականացմանը և աջակցել շրջակա միջավայրի համաձայնեցված ցուցանիշների վերաբերյալ տվյալների/ տեղեկատվության գործնական փոխանակմանը՝ ըստ Հայաստանի միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների:

Հաշվետվությունը մշակվել է՝ գնահատելու շրջակա միջավայրի և ընտրված ցուցանիշների համախմբի վերաբերյալ տվյալների ներկա վիճակը՝ Հայաստանում ՇՄՏՄՀ իրականացումը խթանելու նպատակով: Այսպիսով, սույն հաշվետվությունը նկարագրում է հետևյալ թեմատիկ բնագավառների տվյալների համախումբը՝ օդ, կլիմա, ջուր, թափոններ և կենսաբազմազանություն, գնահատում է շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալների ազգային մակարդակով հոսքը ՇՄՏՄՀ կառուցվածքի հետ համադրելի լինելու համատեքստում, ինչպես նաև բացահայտում է այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են իրականացնել՝ բարելավելու և խթանելու ՇՄՏՄՀ հետագա զարգացումը:

Գլուխ 1. Առաջնային տվյալների համախումբ ու թեմատիկ ոլորտներ

Ի կատարումն ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) շրջակա միջավայրի ցուցանիշների համատեղ Աշխատանքային խմբի 6-րդ նստաշրջանի ընդունված որոշումների՝ փորձագետները ներկայումս աշխատում են Արևելյան Եվրոպայում, Կովկասում, Կենտրոնական Ասիայում և Հարավարևելյան Եվրոպայում շրջակա միջավայրի ցուցանիշների կիրառման ուղեցույցի (Ցուցանիշների ուղեցույց) բնագավառում: ՄԱԿ ԵՏՀ-ի ուղեցույցում առկա են ԵՀՔՄ ՇՄՏՄՀ-ի տվյալների 11 ցուցանիշների համախումբ, որոնք ներկա փուլում բնութագրում են ՇՄՏՄՀ-ի նախնական իրականացման հիմնական բովանդակությունը: Տվյալների 11 ցուցանիշների համախումբ յուրաքանչյուրի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունն առկա է ՄԱԿ ԵՏՀ-ի ուղեցույցում՝ http://www.unece.org/env/europe/monitoring/iandr_en.html ինտերնետային հասցեով:

Չնայած այն փաստին, որ Հայաստանում վերոնշյալ տվյալների տրամադրման համար պատասխանատու կազմակերպությունները վերջին տարիներին տվյալների հավաքագրման առումով էական առաջընթաց են արձանագրել, այդուհանդերձ, վերոնշյալ ուղեցույցների կիրառման բնագավառում շատ քիչ առաջընթաց կա: Միջգերատեսչական մակարդակով համագործակցությունը դեռևս թույլ է, և համագործակցության և համակարգման մշակույթի հզորացման կարիք կա, ներառյալ՝ տվյալների և տեղեկատվության փոխանակման բարեփոխումը, շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալներ տրամադրող կազմակերպությունների միջև համակարգման և համագործակցության բարելավումը:

Այդ առումով Հայաստանում ՇՄՏՄՀ-ն դիտարկվում է որպես իրավիճակի բարելավման մեխանիզմներից մեկը: Շրջակա միջավայրի տեղեկատվության հավաքագրումը և փոխանակումը բարելավելու նպատակով ՇՄՏՄՀ-ն նպատակ ունի աջակցել հանրային տեղեկատվության տրամադրողներին՝ պարզեցնելու և ժամանակակից դարձնելու առկա համակարգերը և գործընթացները: Այս ջանքը ներառում է համացանցի հետ համադրելի տեխնիկական ենթակառուցվածքների մշակում, որոնք կարող են օգտագործել տեղեկատվության և հաղորդակցության առաջատար տեխնոլոգիաները՝ հնարավորություն ընձեռնելով մեքենաներին տվյալները հաղորդել առանց աշխատատար մարդկային ռեսուրսի կիրառման: Նման ենթակառուցվածքը բարելավում է տեղեկատվության փոխանակումը և կրճատում է ծախսերը:

Մյուս կողմից, ՇՄՏՄՀ արդյունավետությունը նաև կախված է համագործակցությունից և համակարգումից: Որոշ դեպքերում հավաքագրված տվյալները հաճախ կարող են ծառայել նաև այլ նպատակով: Մինչդեռ, միջազգային համաձայնագրերով հաշվետվությունների պահանջները բավարարելիս երկրները տվյալները ներկայացնում են միայն մեկ նպատակով: Հնարավոր է, որ նրանք նույնիսկ տեղյակ չեն այլ տվյալների պոտենցիալ օգտագործողների մասին, որոնց այդ տվյալներն անհրաժեշտ են: ՇՄԵԳ-ն, Եվրոպայում որպես ՇՄՏՄՀ տուն, աշխատում է բնապահպանական տեղեկատվության փոխանակման առավել արդյունավետ համագործակցության ուղղությամբ, որը կատարում է երկրների կողմից ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ հաշվետվությունները կամ դրանց հղումներն ստանալու և տրամադրելու միջոցով:

Սույն հաշվետվությունը վերլուծում է ընտրված 5 թեմատիկ ուղղությունների՝ օդի որակի, կլիմայի փոփոխության, թափոնների, ջրի որակի և կենսաբազմազանության իրավիճակը, և դրանց համապատասխան տվյալները՝ 11 ցուցանիշների համախմբի շրջանակներում:

1.1. Օդի որակ

Բնապահպանության նախարարության **շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնը** (ՇՄՆՄԿ) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը պատասխանատու է մթնոլորտային օդի ու մակերևութային ջրի որակի և հողի աղտոտման մոնիտորինգի իրականացման համար: Վերջին երկու տասնամյակում Հայաստանում օդի որակի մոնիտորինգը էական փոփոխությունների է ենթարկվել: Օդի որակի մոնիտորինգի ցանցը բավականին ընդգրկուն էր նախկին Խորհրդային Միության ժամանակ, որը սակայն էական կրճատումների ենթարկվեց՝ կապված Խորհրդային Միության փլուզման հետ: 1997-1998թթ. Հայաստանի միայն 4 քաղաքում էր (Երևան, Վանաձոր, Ալավերդի և Արարատ) իրականացվում օդի մոնիտորինգ (11 ցուցանիշների համար): 1997թ.-ին Երևանում դադարեցվեց ածխածնի օքսիդի մոնիտորինգը: Ի լրումն դրա, մի շարք կարևոր դիտակետերում մոնիտորինգն ընդհանրապես դադարեցվեց:

1999թ.-ին Գյումրի և Հրազդան քաղաքները նույնպես ներգրավվեցին մոնիտորինգի ցանցում: Վերջին տարիներին իրավիճակը էապես բարելավվել է՝ պետական բյուջեից և դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ օդի որակի ժամանակակից սարքավորումների ձեռք բերման շնորհիվ: Ներկա դրությամբ օդի որակի մոնիտորինգն իրականացվում է երկրի վեց օդային ավազաններում. Ալավերդի, Արարատ, Գյումրի, Հրազդան, Վանաձոր և Երևան: Ընդհանուր առմամբ երկրում կա օդի մոնիտորինգի գործող 13 կայան, ներառյալ՝ 2-ը Ալավերդում, 1-ը Արարատում, 1-ը Գյումրիում, 1-ը Հրազդանում, 3-ը Վանաձորում և 5-ը Երևանում:

Անդրսահմանային աղտոտման մոնիտորինգի նպատակով ՇՄՆՄԿ-ն ակտիվորեն մասնակցում է Օդի անդրսահմանային հեռահար աղտոտման մասին կոնվենցիայի (ՕԱՀԱԿ) շրջանակներում իրականացվող մոնիտորինգի և գնահատման եվրոպական ծրագրին: Օդի որակի մոնիտորինգի Ամբերդի կայանը, որը գտնվում է ծովի մակերևույթից 2070 մ բարձրության վրա, ամբողջովին համապատասխանում է ՕԱՀԱԿ պահանջներին: Ավելին, վերջերս Ծաղկաձոր քաղաքի հյուսիսային մասում տեղադրվել է ավտոմատ մոնիտորինգի կայան, որն իրականացնում է օդի որակի մոնիտորինգ՝ եվրոպական ստանդարտների համաձայն:

Վերջին տարիների զարգացումների արդյունքում օդի որակի մոնիտորինգի բնագավառում զարգացել է մոնիտորինգի հիբրիդ ցանց: Օդի որակի մոնիտորինգը ներկայումս բաղկացած է 2 հիմնական աղտոտիչի համար 300 պասիվ նմուշառման դիտակետերից, որոնք տրամադրում են միջին շաբաթական տվյալներ: 18 դիտակետում ՇՄՆՄԿ-ն իրականացնում է 4 աղտոտիչի (ծծումբ, ազոտի երկօքսիդ, օզոն և ընդհանուր գազ) ակտիվ նմուշառում, իսկ 7 կայանում, որից 4-ը գտնվում են Երևանում, իրականացվում են ավտոմատ չափումներ: Այս ավտոմատ դիտակետերը իրականացնում են օդի որակի մոնիտորինգ, և ներառում են շուրջ 30 ավտոմատ անալիզատորներ: Դրանց քանակը բավարար չէ, և իդեալական տարբերակում դրանց թիվը պետք է լինի 3-4 անգամ շատ: Այդուհանդերձ, այդ սարքավորումները պատրաստվել են Ամերիկայի Միացյալ Նահանգներում (ԱՄՆ) և Ճապոնիայում և բավականին թանկ են, իսկ ֆինանսական ճգնաժամը հնարավորություն չտվեց ՇՄՆՄԿ-ին ավարտին հասցնել մոնիտորինգի սարքավորումների թարմացումը:

Ջրի որակի մոնիտորինգի տվյալների մեծ մասն առկա է հայերեն լեզվով, և տեղադրված է ՇՄՆՄԿ վեբ-կայքում՝ <http://www.armmonitoring.am>:

1.1.1. Օծմբի երկօքսիդի (SO₂) արտանետումներ

ա.

Հաշվետվության մակարդակը	Պարտավորությունները
Ազգային	Երկրում տնտեսական գործունեության արդյունքում մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի հաշվառում՝ նախատեսված ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով և ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեկան աշխատանքային ծրագրով
Տարածաշրջանային	ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե՝ տարեկան ամփոփ տվյալների տրամադրման պարտավորություններ
Միջազգային	ՕԱՀԱԿ քարտուղարություն՝ հաշվետու լինելու պարտավորություններ

բ.

Տվյալները տնօրինողները, տրամադրողները	Պատասխանատու կազմակերպությունները
<p>ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող</p>	<p>ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանական վիճակագրության բաժին. բաժնի պետ Նելի Բաղդասարյան հեռ. (+374-10) 52-45-14 էլ. փոստ. nelly@armstat.am</p> <p>Աշխատանքները համակարգող՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի բնապահպանական վիճակագրությունը համակարգող անդամ՝ Յուրի Պողոսյան հեռ. (+374-10) 52-46-18 էլ. փոստ. yupoghosyan@armstat.am</p> <p>0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն Հեռ. (+37410) 52-33-56 Ֆաքս. (+37410) 52-19-21 էլ. փոստ info@armstat.am կայք էջեր՝ http://www.armstat.am (հայելային կայք էջ՝ http://www.armstat.info), http://www.armstatbank.am, http://www.armdevinfo.am</p>
<p>ՀՀ բնապահպանության նախարարություն. տվյալների տրամադրող միջազգային մակարդակում</p>	<p>ՀՀ ԲՊՆ «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ, տնօրենի պաշտոնակատար Գագիկ Հովհաննիսյան Հեռ. (+374-10) 54-21-42 էլ. փոստ. iac@mnp.am</p> <p>ՀՀ ԲՊՆ մթնոլորտային օդի քաղաքականության բաժին. պատասխանատու՝ գլխավոր մասնագետ Անժելա Տուրլիկյան, հեռ. (+37410) 58-39-34 էլ.փոստ. turlikyan@nature.am</p>

	<p>ՀՀ ԲՊՆ բնապահպանական պետական տեսչություն. պատասխանատու՝ տեսչության պետի տեղեկալ Մարգարետունի Քամալյան Հեռ. (+374-10) 56-74-24 էլ. փոստ. m.kamalyan@yandex.ru</p> <p>0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք ՀՀ Բնապահպանության նախարարություն Հեռ. (+374-10) 52-10-99 Ֆաքս. (+374-10) 54-08-57 էլ. փոստ. min_ecology@mnp.am կայք էջ. http://www.mnp.am</p>
--	--

գ.

Տվյալների ձևաչափեր և լեզու	Մատչելիություն և փոխանակման իրավունք
<p>Ազգային և օգտագործողին բնորոշ հաշվետվության ձևաչափեր</p> <p>1. xls աղուսակներ (հայերեն)</p> <p>2. տարեկան վիճակագրական հաշվետվություն: PDF, թղթային տարբերակ (հայերեն)</p> <p>3. Տարեկան բնապահպանական վիճակագրական զեկույց, օդի մասին գլուխ. PDF, word, թղթային, էլեկտրոնային (հայերեն, անգլերեն), ԱՊՀ հաշվետվ.՝ ռուսերեն</p>	<p>Ազգային և օգտագործողին բնորոշ, հաշվետվությունների ձևաչափեր</p> <p>1. մատչելի է համագործակցության հուշագրի, այլ պայամանվորվածությունների հիման վրա</p> <p>2. հավասար մատչելիություն բոլոր սպառողների համար, անվճար՝ բոլոր տարբերակների համար</p> <p>3. վիճակագրականը միայն ամփոփ տեսքով /սահմանված է վիճակագրության մասին օրենքով/</p>
<p>Տարածաշրջանային հաշվետվության ձևաչափեր:</p> <p>ծրագրերին բնորոշ</p>	<p>Տարածաշրջանային հաշվետվություն: սահմանափակ մատչելիություն (սահմանվում է տարածաշրջանային մարմնի կողմից)</p> <p>Դրանք հիմնականում տարածաշրջանային, միջպետական ծրագրերով սահմանված զեկույցներն են և համապատասխան հաշվետվություններ՝ հայերեն, անգլերեն. (օր., Քուր-Արաքսի, կլիմայի փոփոխությանն առնչվող թեմաներով). եթե անդրկովկասյան երկրների համար է՝ ռուսերեն</p>
<p>Միջազգային հաշվետվության ձևաչափեր: ՕԱՀԱԿ</p>	<p>Միջազգային հաշվետվություն: ՕԱՀԱԿ քարտուղարության պորտալ, կիրառվում են քարտուղարության տվյալների փոխանակության կանոնները</p> <p>Վերջին զեկույցին ինտերնետային հղումը http://webdab1.umweltbundesamt.at/download/su_bmissions2013/FR_NFR2013.zip?cgiproxy_skip=1</p>

դ.

Ժամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
<p>Վիճակագրական հաշվետվությունները տարեկան են</p>	<p>- երկրի մակարդակով /փոխանակվում են միջազգայնորեն</p> <p>- քաղաքին կամ մարզին բնորոշ (բոլոր 10 մարզերը, Երևան և հիմնական քաղաքներ)</p> <p>- հեշտությամբ կարող են փոխանակվել միջազգայնորեն</p>


Եզրակացություն: Ծծմբի երկօքսիդի (SO₂) արտանետումների տվյալները կարող են փոխանակվել ՇՄԵԳ հետ նույն ձևաչափով, ինչպես զեկուցվում է ՕԱՀԱԿ քարտուղարությանը՝ ձևաչափերի համատեղելիության ապահովման դեպքում:

Օդի որակի տվյալների օրինակ (տարբերվում է օդի արտանետումների տվյալներից) – դ. կետ

Ժամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
1. տարեկան / տվյալները հեշտությամբ հասանելի են ու կարող են փոխանակվել 2. ամսեկան / տվյալները հավաքագրվում են միայն երկրի ներսում օգտագործման համար 3. օրական / տվյալները հրապարակվում են միայն տեղային մակարդակում	1. 13 (49-ից) քաղաքի համար տվյալները մատչելի են ու կարող են փոխանակվել 2. 13 (49-ից) քաղաքի համար տվյալները պոտենցիալ առումով կարող են տրամադրվել 3. 13 քաղաքի համար են և տվյալները մատչելի են միայն տեղային մակարդակում, դրանք չեն տրամադրվում Այլ բնակավայրերի համար կարող են իրականացնել չափումներ՝ պայմանագրային հիմունքներով:

ե.

Ստորև ներկայացված է տվյալների հոսքի շղթայի սխեմատիկ պատկերը



զ.

Ծծմբի երկօքսիդի (SO₂) արտանետումների տվյալների հավաքածուն կարող է փոխանակվել միջազգային մակարդակում ՇՄԵԳ հետ, միևնույն ձևաչափով, որն օգտագործվում է ՕԱՀԱ կոնվենցիային տվյալների տրամադրման համար: Հիմնական բացը արտանետումների փաստացի ծավալների չափումների ոչ ամբողջական իրականացումն է, ինչի պատճառով հաճախ կիրառվում է հաշվարկային մեթոդը՝ հիմք ընդունելով գործունեության բնապահպանական

թույլատվության պայմանները: Հաջորդ բացթողումը բնապահպանական վարչական ռեգիստրների անկատարությունն է: Այն հնարավորություն չի տալիս ամբողջապես ապահովելու տեղեկատվության համադրելիությունը և տրամադրման համաժամանակայնությունը:

Տվյալների փոխանակումն իրականացվում է համապատասխան կոնվենցիաների և միջպետական համաձայնագրերի հիման վրա:

Տվյալների փոխանակման հարցում հիմնական բացը՝ ընդգրկված երկրներում ընդունված միասնական մեթոդաբանական մոտեցումների կիրառման դժվարությունն է:

Ազգային կամ ներքին տարածաշրջանային (ոչ երրորդ երկրների համար) զեկույցների մեջ ներառվող տվյալների փոխանակման հիմնական բացը՝ միջոցների անբավարարության պատճառով համապատասխան մոնիտորինգի և վերահսկվող ցուցանիշների ամբողջականության ապահովումն է: Առկա են նաև անհամապատասխանություններ՝ երկրներում փաստացի գործող մեթոդաբանությունների միջև:

է.

Երկրի մակարդակով մեթոդական ու տեխնիկական հղորությունների զարգացման կարիքները ներառում են.

- Տվյալների բազաների ձևափոխումը՝ տվյալների պատշաճ փոխանակում ապահովելու նպատակով,
- Տվյալների բազայի մատչելիության ապահովումը՝ ՀՀ ԲՊՆ բնապահպանական պետական տեսչությունում, ՀՀ ԲՊՆ ՇՄՆՄԿ ու Տեղեկատվական վերլուծական կենտրոն ՊՈԱԿ-ներում,
- Լաբորատորիկաներում տվյալների մուտքագրման, մշակման, արխիվացման ու փոխանակման հարցերով աշխատակազմի վերապատրաստումը:

Հիմնական բացը՝ ՇՄՍՄՀ հետ համադրելի միացյալ տվյալների բազայի բացակայությունն է:

1.1.2. Ազոտի օքսիդների (NOx) արտանետումներ

ա.

Հաշվետվության մակարդակը	Պարտավորությունները
Ազգային	Երկրում տնտեսական գործունեության արդյունքում մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի հաշվառում՝ նախատեսված ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով և ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեկան աշխատանքների ծրագրով
Տարածաշրջանային	ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե՝ տարեկան ամփոփ տվյալների տրամադրման պարտավորություններ
Միջազգային	ՕԱՀԱԿ քարտուղարություն հաշվետու լինելու պարտավորություններ

բ.

Տվյալները տնօրինողները, տրամադրողները	Պատասխանատու կազմակերպությունները
ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանական վիճակագրության բաժին. բաժնի պետ Նելի Բաղդասարյան հեռ. (+374-10) 52-45-14 Էլ. փոստ. nelli@armstat.am Աշխատանքները համակարգող՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի բնապահպանական վիճակագրությունը

	<p>համակարգող անդամ՝ Յուրի Պողոսյան հեռ. (+374-10) 52-46-18 Էլ. փոստ. yupoghosyan@armstat.am</p> <p>0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն Հեռ. (+37410) 52-33-56 Ֆաքս. (+37410) 52-19-21 Էլ. փոստ info@armstat.am կայք էջեր՝ http://www.armstat.am</p>
<p>ՀՀ բնապահպանության նախարարություն. տվյալների տրամադրող միջազգային մակարդակում</p>	<p>ՀՀ ԲՊՆ «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ, տնօրենի պաշտոնակատար Գագիկ Հովհաննիսյան Հեռ. (+374-10) 54-21-42 Էլ. փոստ. iac@mnp.am</p> <p>ՀՀ ԲՊՆ մթնոլորտային օդի քաղաքականության բաժին. պատասխանատու՝ գլխավոր մասնագետ Անժելա Տուրլիկյան, հեռ. (+37410) 58-39-34 Էլ.փոստ. turlikyan@nature.am</p> <p>ՀՀ ԲՊՆ բնապահպանական պետական տեսչություն. պատասխանատու՝ տեսչության պետի տեղեկալ Մարգարետունի Քամայան Հեռ. (+374-10) 56-74-24 Էլ. փոստ. m.kamalyan@yandex.ru</p> <p>0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք ՀՀ Բնապահպանության նախարարություն Հեռ. (+374-10) 52-10-99 Ֆաքս. (+374-10) 54-08-57 Էլ. փոստ. min_ecology@mnp.am կայք էջ. http://www.mnp.am</p>

Գ.

Տվյալների ձևաչափեր և լեզու	Մատչելիություն և փոխանակման իրավունք
<p>Ազգային և օգտագործողին բնորոշ հաշվետվության ձևաչափեր 1. xls աղուսակներ (հայերեն) 2. տարեկան վիճակագրական հաշվետվություն. PDF, թղթային տարբերակ (հայերեն) 3. Տարեկան բնապահպանական վիճակագրական զեկույց, օդի մասին գլուխ. PDF,word, թղթային, էլեկտրոնային (հայերեն, անգլերեն), ԱՊՀ հաշվետվ. ռուսերեն</p>	<p>Ազգային և օգտագործողին բնորոշ, հաշվետվությունների ձևաչափեր 1. մատչելի է համագործակցության հուշագրի, այլ պայամանվորվածությունների հիման վրա 2. հավասար մատչելիություն բոլոր սպառողների համար, անվճար՝ բոլոր տարբերակների համար 3. վիճակագրականը՝ միայն ամփոփ տեսքով /սահմանված է վիճակագրության մասին օրենքով/</p>
<p>Տարածաշրջանային հաշվետվության ձևաչափեր:</p>	<p>Տարածաշրջանային հաշվետվություն: սահմանափակ մատչելիություն (սահմանվում է տարածաշրջանային մարմնի կողմից)</p>

ծրագրերին բնորոշ	Դրանք հիմնականում տարածաշրջանային, միջպետական ծրագրերով սահմանված զեկույցներն են և համապատասխան հաշվետվություններն են՝ հայերեն, անգլերեն. (օր., Կուր-Արաքսի, կլիմայի փոփոխությանն առնչվող թեմաներով). եթե անդրկովկասյան երկրների համար է՝ ռուսերեն
Միջազգային հաշվետվության ձևաչափեր: ՕԱՀԱԿ	Միջազգային հաշվետվություն: ՕԱՀԱԿ քարտուղարության պորտալ, կիրառվում են քարտուղարության տվյալների փոխանակության կանոնները: Վերջին զեկույցին ինտերնետային հղումը՝ http://webdab1.umweltbundesamt.at/download/su_bmissions2013/FR_NFR2013.zip?cgiproxy_skip=1

դ.


Փամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
Վիճակագրական հաշվետվությունները տարեկան են	- երկրի մակարդակով /փոխանակվում են միջազգայնորեն - քաղաքին կամ մարզին բնորոշ (բոլոր 10 մարզերը, Երևան և հիմնական քաղաքներ) - հեշտությամբ կարող են փոխանակվել միջազգայնորեն

Օդի որակի տվյալների օրինակ (տարբերվում է օդի արտանետումների տվյալներից) – դ. կետ

Փամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
1. տարեկան / տվյալները հեշտությամբ հասանելի են ու կարող են փոխանակվել 2. ամսեկան / տվյալները հավաքագրվում են միայն երկրի ներսում օգտագործման համար 3. օրական / տվյալները հրապարակվում են միայն տեղային մակարդակում	1. 13 (49-ից) քաղաքի համար տվյալները մատչելի են ու կարող են փոխանակվել 2. 13 (49-ից) քաղաքի համար տվյալները պոտենցիալ առումով կարող են տրամադրվել 3. 13 քաղաքի համար են և տվյալները մատչելի են միայն տեղային մակարդակում, դրանք չեն տրամադրվում: Այլ բնակավայրերի համար կարող են իրականացնել չափումներ՝ պայմանագրային հիմունքներով:

Եզրակացություն: Ազոտի օքսիդների (NO_x) արտանետումների տվյալները կարող են փոխանակվել ՇՄԵԳ հետ նույն ձևաչափով, ինչպես զեկույցվում է ՕԱՀԱԿ քարտուղարություն, ձևաչափերի համատեղելիության ապահովման դեպքում:

ե. Ստորև ներկայացված է տվյալների հոսքի շղթայի սխեմատիկ պատկերը



Գ.

Ազոտի օքսիդների (NO_x) արտանետումների տվյալների համախումբը կարող է փոխանակվել միջազգային մակարդակում ՇՄԵԳ հետ, մինևույն ձևաչափով, որն օգտագործվում է ՕԱՀԱ կոնվենցիային տվյալների տրամադրման համար: Հիմնական բացը՝ արտանետումների փաստացի ծավալների չափումների ոչ ամբողջական իրականացումն է, ինչի պատճառով հաճախ կիրառվում է հաշվարկային մեթոդը՝ հիմք ընդունելով գործունեության բնապահպանական թույլատվության պայմանները: Հաջորդ բացթողումը՝ բնապահպանական վարչական ռեգիստրների անկատարությունն է: Այն հնարավորություն չի տալիս ամբողջապես ապահովելու տեղեկատվության համադրելիությունը և տրամադրման համաժամանակայնությունը:

Տվյալների փոխանակումն իրականացվում է համապատասխան կոնվենցիաների և միջպետական համաձայնագրերի հիման վրա: Հիմնական բացը՝ տվյալների փոխանակման մեջ ընդգրկված երկրներում ընդունված միասնական մեթոդաբանական մոտեցումների կիրառման դժվարությունն է: Ազգային կամ ներքին տարածաշրջանային (ոչ երրորդ երկրների համար) զեկույցների մեջ ներառվող տվյալների փոխանակման հիմնական բացը միջոցների անբավարարության պատճառով համապատասխան մոնիտորինգի և վերահսկվող ցուցանիշների ամբողջականության ապահովումն է: Առկա են նաև անհամապատասխանություններ՝ երկրներում փաստացի գործող մեթոդաբանությունների միջև:

Է.

Երկրի մակարդակով մեթոդական ու տեխնիկական հղորությունների զարգացման կարիքները ներառում են.

- Տվյալների բազաների ձևափոխում՝ տվյալների պատշաճ փոխանակում ապահովելու նպատակով

- Տվյալների բազայի մատչելիության ապահովում՝ ՀՀ ԲՊՆ բնապահպանական պետական տեսչությունում, ՀՀ ԲՊՆ ՇՄՆՄԿ ու Տեղեկատվական վերլուծական կենտրոն ՊՈԱԿ-ներում:
- Լաբորատորիկաներում՝ տվյալների մուտքագրման, մշակման, արխիվացման ու փոխանակման հարցերով աշխատակազմի վերապատրաստումը:

Հիմնական բացը՝ ՇՄՏՄՀ հետ համադրելի միացյալ տվյալների բազայի բացակայությունն է:

1.1.3. Քաղաքներում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին կոնցենտրացիա

ա.

Հաշվետվության մակարդակը	Պարտավորությունները
Ազգային	ՀՀ ԲՊՆ ՇՄՆՄԿ տարեկան աշխատանքային պլան և տարեկան աշխատանքների հաշվետվություն՝ ՀՀ բնապահպանության նախարարին
Միջազգային	<ul style="list-style-type: none"> - ՄԱ ԿՓՇԿ հաշվետու լինելու պարտավորությունները - Ամբերդի օդի որակի մոնիտորինգի տվյալների փոխանակում՝ Նորվեգիայի օդի որակի լաբորատորիայի հետ՝ «Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման ծրագրի» շրջանակներում, որպես ՕԱՀԱԿ պարտավորություն

բ.

Տվյալները տնօրինողները, տրամադրողները	Պատասխանատու կազմակերպությունները
ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	<p>ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանական վիճակագրության բաժին. բաժնի պետ՝ Նելի Բաղդասարյան հեռ. (+374-10) 52-45-14 էլ. փոստ. nelli@armstat.am</p> <p>Աշխատանքները համակարգող՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի բնապահպանական վիճակագրությունը համակարգող անդամ՝ Յուրի Պողոսյան հեռ. (+374-10) 52-46-18 էլ. փոստ. yupoghosyan@armstat.am</p> <p>0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն Հեռ. (+37410) 52-33-56 Ֆաքս. (+37410) 52-19-21 էլ. փոստ info@armstat.am կայք էջեր՝ http://www.armstat.am (հայելային կայք էջ՝ http://www.armstat.info), http://www.armstatbank.am, http://www.armdevinfo.am</p>
ՀՀ ԲՊՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն». Տվյալների տրամադրող՝ միջազգային մակարդակում	Լուսինե Գևորգյան Օդային ավազանների մոնիտորինգի ծրագրի համակարգող, «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ, ք.Երևան, Կոմիտաս 29, 3-րդ հարկ

	Հեռ. (+374-10) 26-13-94 Էլ փոստ. lusinegevorgyan@gmail.com
--	--

գ.


Տվյալների ձևաչափեր և լեզու	Մատչելիություն և փոխանակման իրավունք
Ազգային և օգտագործողին բնորոշ հաշվետվության ձևաչափեր <ol style="list-style-type: none"> ամսական տեղեկագրեր, Word, PDF, թղթային տարբերակ (հայերեն) տարեկան տեղեկագրեր, Word, PDF, թղթային տարբերակ (հայերեն) տարեկան ամփոփագիր, Word, PDF, թղթային տարբերակ (հայերեն) xls աղյուսակներ (հայերեն) xls գրաֆիկներ (հայերեն) շաբաթական, ամսական, տարեկան քարտեզներ (հայերեն) օգտագործողին բնորոշ 	Ազգային և օգտագործողին բնորոշ հաշվետվություն <ol style="list-style-type: none"> բաց մատչելիություն բաց մատչելիություն մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին կառույցների համար մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին ստորաբաժանումների համար / վճարովի ծառայություն բաց մատչելիություն բաց մատչելիություն վճարովի ծառայություն
Միջազգային հաշվետվության ձևաչափեր Ամբերդի օդի որակի մոնիտորինգի տվյալների փոխանակում Նորվեգիայի օդի որակի լաբորատորիայի հետ՝ «Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման ծրագրի» շրջանակներում, որպես ՕԱՀԱԿ պարտավորություն – xls աղյուսակներ (անգլերեն)	Միջազգային հաշվետվության ձևաչափեր ՕԱՀԱԿ Քարտուղարության պորտալ ու հրապարակումներ / գործում են տվյալների փոխանակման Քարտուղարության կանոնները http://webdab1.umweltbundesamt.at/download/submissions2013/FR_NFR2013.zip?cgiproxy_skip=1

դ.

Ժամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
<ol style="list-style-type: none"> տարեկան / տվյալները հավաքագրվում են, հասանելի են ու կարող են փոխանակվել ամսական / տվյալները հավաքագրվում են, հասանելի են ու կարող են փոխանակվել շաբաթական / տվյալները հրապարակվում են քարտեզների տեսքով օրական / տվյալները պահվում են միայն ՊՈԱԿ-ի ներսում 	<ol style="list-style-type: none"> 13 բնակավայրի օդի որակի տվյալները տեղեկանքի տեսքով մատչելի են բոլորի համար: 13 բնակավայրի օդի որակի միջին ամսական տվյալները տեղեկանքների տեսքով մատչելի են բոլորի համար: 13 բնակավայրի օդի որակի միջին շաբաթական տվյալները աղտոտվածության բաշխվածության քարտեզների տեսքով մատչելի են բոլորի համար: 13 բնակավայրերի օդի որակի մոնիտորինգի ամենօրյա տվյալները պահվում են ՊՈԱԿ-ի տեղեկատվական բաժնում, տվյալները մատչելի չեն, տրամադրվում են միայն արտակարգ իրավիճակների դեպքում:

Եզրակացություն: Քաղաքներում ազոտի երկօքսիդի (NO₂) արտանետումների տվյալները կարող են փոխանակվել ՇՄԵԳ հետ նույն ձևաչափով, ինչպես զեկուցվում են ՄՍ ԿՓՇԿ կամ ՕԱՀԱԿ քարտուղարություն, ձևաչափերի համատեղելիության ապահովման դեպքում:

ե. Ստորև ներկայացված է տվյալների հոսքի շղթայի սխեմատիկ պատկերը



գ.

Միջազգային կազմակերպությունների հետ տվյալների փոխանակման հիմնական ինստիտուցիոնալ կառույցը ՀՀ ԲՊՆ է, որն հանդիսանում է տեղեկատվության տրամադրման լիազորված մարմին: Տվյալների փոխանակման իրավական հիմքերը միջազգային կոնվենցիաների և միջպետական պայմանագրերի ներքո երկրի ստանձնած պարտավորություններն են, ինչպես նաև համապատասխան բնագավառի օրենսդրությունն ու կանոնակարգերը:

է.

Երկրի մակարդակով տվյալների հոսքերի զարգացման ու ՇՄԵԳ-ի հետ տվյալների փոխանակման մեթոդական ու տեխնիկական հզորությունների զարգացման հիմնական կարիքները համապատասխան ֆինանսական ու տեխնիկական միջոցների բացակայությունն է, ինչպես նաև վերապատրաստված աշխատակիցների պակասը:

Ավելի բնորոշ կարիքներն են.

- Միջլաբորատոր անալիտիկ միջանկյալ տվյալների բազաների ստեղծումը,
- Ընդհանուր տվյալների շտեմարանի ստեղծումը՝ տվյալների հավաքագրման և արխիվացման համար, դրա ներդաշնակեցումն է՝ միջլաբորատոր միջանկյալ տվյալների բազաների հետ,
- Ավտոմատ և լաբորատոր սարքավորումներից ստացվող տվյալների դեպի տվյալների բազա հոսքն ապահովող ծրագրերի մշակում կամ ձեռք բերումն է,
- Տվյալների բազայի ճկունության և մատչելիության ապահովումն է՝ ՊՈԱԿ-ի լաբորատորիաների և տեղեկատվության բաժնի միջև,
- Տվյալների բազաների հետ աշխատանքի վերապատրաստան դասընթացներն են:

1.2. Կլիմայի փոփոխություն

Որպես Օզոնի շերտի պահպանության Վիենայի կոնվենցիայի և ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի անդամ Հայաստանն ունի հաշվետվությունների ներկայացման համապատասխան պարտավորություններ: Որպես Օզոնի կոնվենցիայի և դրա Մոնրեալի արձանագրության կողմ, Հայաստանը հաշվետվություն է ներկայացնում օզոնը քայքայող նյութերի վերաբերյալ և երկրի համապատասխան տվյալներն առկա են կոնվենցիայի կայքէջում. http://ozone.unep.org/new_site/en/ozone_data_tools_access.php հասցեով: Գլոբալ էկոլոգիական Ֆոնդի կողմից ֆինանսավորման առկայության դեպքում ՀՀ բնապահպանության նախարարությունը միջազգային մակարդակով հաշվետվություններ է ներկայացնում, սակայն այդ տեղեկատվությունը առկա չէ նախարարության կայք-էջում:

Որպես ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) կողմ Հայաստանը տարեկան հաշվետվություն է ներկայացնում ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ կոնվենցիայի քարտուղարությանը: Նման տեղեկատվությունն առկա է ԿՓՇԿ քարտուղարությանը ներկայացրած առաջին և երկրորդ ազգային հաղորդակցություններում, որը թարմացվում է ԿՓՇԿ-ին ներկայացնելու նպատակով: Ներկայումս մշակվում է կլիմայի փոփոխության վերաբերյալ երրորդ ազգային հաղորդագրությունը:

Օգոնը քայքայող նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ բավականին շատ տեղեկատվություն կա Հայաստանի կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնում (ԿՓՏԿ): ԿՓՏԿ-ն հիմնադրվել է՝ նպատակ ունենալով բացահայտել և կապեր ստեղծել տեղեկատվության ազգային և միջազգային աղբյուրների միջև, ինչը հնարավորություն կտա տարածել գիտելիքներ և կանխել համանման աշխատանքների կրկնողությունները: Կայք-էջի հասցեն հետևյալն է. <http://www.nature-ic.am>:

1.2.1. Օգոն քայքայող նյութերի սպառում

ա.

Հաշվետվության մակարդակը	Պարտավորությունները
Ազգային	ՀՀ ԲՊՆ մթնոլորտային օդի քաղաքականության բաժնի տարեկան աշխատանքային պլան և տարեկան աշխատանքների հաշվետվություն՝ ՀՀ բնապահպանության նախարարին
Միջազգային	ՄԱ ԿՓՇԿ հաշվետու լինելու պարտավորությունները

բ.

Տվյալները տնօրինողները, տրամադրողները	Պատասխանատու կազմակերպությունները
Օգոն քայքայող նյութեր ներմուծող կազմակերպություններ, օգոն քայքայող նյութեր արտադրող կամ օգտագործող կազմակերպություններ՝ ազգային մակարդակում Տվյալների տրամադրող	ՀՀ Կառավարության առընթեր պետ եկամուտների կոմիտե 0017, Երևան, Խորենացի փող. 17 Հեռ. (+374-60) 54-46-57 Էլ փոստ. info@petekamutner.am Վեբ կայք: http://www.taxservice.am
ՀՀ Բնապահպանության նախարարություն. Տվյալների տրամադրող՝ միջազգային մակարդակում	Մարտիրոս Ծառուկյան, ՀՀ ԲՊՆ մթնոլորտային օդի քաղաքականության բաժնի պետ 0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք Հեռ. (+374-10) 58-39-34 Էլ փոստ. martiros@nature.am Վեբ կայք: http://www.mnp.am

գ.


Տվյալների ձևաչափեր և լեզու	Մատչելիություն և փոխանակման իրավունք
xls աղյուսակներ	Մատչելի են բոլորի համար

դ.

Ժամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
Եռամսյակային տվյալներ	Երկրի մակարդակով

Եզրակացություն: Օգոն քայքայող նյութերի տվյալները կարող են փոխանակվել ՇՄԵԳ հետ նույն ձևաչափով, ինչպես զեկուցվում են ՄԱ ԿՓՇԿ քարտուղարություն՝ ձևաչափերի համատեղելիության ապահովման դեպքում:

ե. Ստորև ներկայացված է տվյալների հոսքի շղթայի սխեմատիկ պատկերը



գ. Տվյալների փոխանակման իրավական հիմքերը միջազգային կոնվենցիաների և միջպետական պայմանագրերի ներքո երկրի ստանձնած պարտավորություններն են, ինչպես նաև համապատասխան բնագավառի օրենսդրությունն ու կանոնակարգերը:

է. Երկրի մակարդակով տվյալների հոսքերի զարգացման ու ՇՄԵԳ-ի հետ տվյալների փոխանակման մեթոդական ու տեխնիկական հզորությունների զարգացման հիմնական կարիքները՝ համապատասխան ֆինանսական ու տեխնիկական միջոցների բացակայությունն է, ինչպես նաև վերապատրաստված աշխատակիցների պակասն է:

1.2.2. Ջերմոցային գազերի արտանետումներ

ա.

Հաշվետվության մակարդակը	Պարտավորությունները
Ազգային	ՀՀ ԲՊՆ մթնոլորտային օդի քաղաքականության բաժնի տարեկան աշխատանքային պլան և տարեկան աշխատանքների հաշվետվություն ՀՀ բնապահպանության նախարարին
Միջազգային	ՄԱ ԿՓՇԿ հաշվետու լինելու պարտավորությունները

բ.

Տվյալները տնօրինողները, տրամադրողները	Պատասխանատու կազմակերպությունները
ՀՀ Բնապահպանության նախարարություն. Տվյալների տրամադրող միջազգային մակարդակում՝ Ջերմոցային գազերի կադաստր	Մարտիրոս Ծառուկյան, ՀՀ ԲՊՆ մթնոլորտային օդի քաղաքականության բաժնի պետ 0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք Հեռ. (+374-10) 58-39-34 Էլ փոստ. martiros@nature.am Վեբ կայք: http://www.mnp.am
ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն 0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք Հեռ. (+37410) 52-33-56 Ֆաքս. (+37410) 52-19-21 Էլ. փոստ info@armstat.am կայք էջեր՝ http://www.armstat.am (հայելային կայք էջ՝ http://www.armstat.info), http://www.armstatbank.am , http://www.armdevinfo.am

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք Հեռ. (+374-10) 52-46-41 Ֆաքս. (+374-10) 52-46-41 Էլ հասցե. agro@minagro.am Վեբ կայք. http://www.minagro.am “Հայանտառ” ՊՈԱԿ 0047, Երևան, Արմենակյան փող. 129 Հեռ. (+374-10) 65-17-38 Էլ հասցե. arm_forest@yahoo.com
ՀՀ Էներգետիկայի ու բնական պաշարների նախարարություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	ՀՀ Էներգետիկ հաշվեկշիռը հաշվարկող կազմակերպություններ

գ.

Տվյալների ձևաչափեր և լեզու	Մատչելիություն և փոխանակման իրավունք
Excel/Word աղյուսակներ, հայերեն, անգլերեն	Սահմանափակ մատչելիություն
Միջազգային հաշվետվության ձևաչափեր ՄԱ ԿՓՇԿ	Միջազգային հաշվետվության ձևաչափեր ՄԱ ԿՓՇԿ Քարտուղարության պորտալ ու հրապարակումներ / գործում են տվյալների փոխանակման Քարտուղարության կանոնները http://unfccc.int/files/ghg_data/ghg_data_unfccc/ghg_profiles/application/pdf/arm_ghg_profile.pdf


դ.

Ժամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
Երկու տարին մեկ անգամ	Ամբողջ երկրի տարածքով

Եզրակացություն: Ջերմոցային գազերի արտանետումների տվյալները կարող են փոխանակվել ՇՄԵԳ հետ նույն ձևաչափով, ինչպես զեկուցվում են ՄԱ ԿՓՇԿ քարտուղարություն՝ ձևաչափերի համատեղելիության ապահովման դեպքում:

ե.

Ստորև ներկայացված է տվյալների հոսքի շղթայի սխեմատիկ պատկերը



գ.

Տվյալների փոխանակման իրավական հիմքերը միջազգային կոնվենցիաների և միջպետական պայմանագրերի ներքո երկրի ստանձնած պարտավորություններն են, ինչպես նաև համապատասխան բնագավառի օրենսդրությունն ու կանոնակարգերն են:

է.

Երկրի մակարդակով տվյալների հոսքերի զարգացման ու ՇՄԵԳ-ի հետ տվյալների փոխանակման մեթոդական ու տեխնիկական հզորությունների զարգացման հիմնական կարիքները համապատասխան ֆինանսական ու տեխնիկական միջոցների բացակայությունն է, ինչպես նաև վերապատրաստված աշխատակիցների պակասն է:

1.3. Թափոններ

ՀՀ ԲՊՆ պատասխանատու է երկրում թափոնների քաղաքականության մշակման և իրականացման համար՝ իր կառուցվածքային ստորաբաժանման միջոցով (Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժին), ինչպես նաև թափոնների կառավարման համար՝ իր առանձնացված ստորաբաժանման միջոցով (Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալություն): Վերջերս բնապահպանության նախարարության կառուցվածքում ստեղծվել է "Թափոնների ուսումնասիրության կենտրոն" ՊՈԱԿ-ը: Կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումները նպատակ ունեն աջակցել թափոններ կառավարման բնագավառում պետական քաղաքականության և ռազմավարության մշակմանը և իրականացմանը, ինչպես նաև վերոնշյալ հարցերի կարգավորմանը:

Հայաստանը վավերացրել է "Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին" Բազելի կոնվենցիան 1999թ.-ին: Արտադրության և սպառման թափոնների կառավարման բնագավառում Հայաստանում առանցքային քայլերից էր "Թափոնների մասին" ՀՀ օրենքի մշակումը և ընդունումը 2004թ. նոյեմբերին: Օրենքը սահմանում է թափոնների կառավարման բնագավառում պետական քաղաքականությունը, որը նպատակ ունի կանխել թափոնների վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա՝ միևնույն ժամանակ առավելագույն օգտագործելով թափոնները՝ որպես երկրորդային հումք: Օրենքի իրավակիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել են ավելի քան 30 ենթօրենսդրական ակտեր:

Վտանգավոր թափոնների ցանկը Հայաստանում համեմտեղելի է դարձվել Բազելի կոնվենցիայի և տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) համապատասխան ցուցակների հետ: Ավելին, Հայաստանն ընդունել է ներմուծման և տարանցիկ փոխադրման համար արգելված վտանգավոր թափոնների ցանկը և դասակարգում է թափոնները ըստ վտանգավորության 4 դասի (5-րդ դասը ոչ վտանգավոր թափոններն են): Հաշվառման նպատակով ընդունվել է համապատասխան ենթօրենսդրական ակտ, համաձայն որի բոլոր ձեռնարկությունները, որոնք թափոն են առաջացնում, պետք է տարեկան հաշվետվություններ ներկայացնեն առաջացած թափոնների քանակի, աղբավայր տեղափոխված թափոնների, ինչպես նաև ըստ վտանգավորության աստիճանի կատարած վճարումների վերաբերյալ: Այսպիսով, ձեռնարկությունները տարեկան հաշվետվություններ են ներկայացնում բնապահպանության նախարարություն և պարտավոր են կազմել և հաստատել ՀՀ բնապահպանության նախարարության հետ համաձայնեցված վտանգավոր թափոնների անձնագրեր, որոնք ներառում են թափոնների տեսակի, քանակի, վտանգավորության աստիճանի, դրանց կազմի և ռեսուրսային ու հումքային հիմնական հատկությունների մասին տեղեկություններ:

Ներկայում Հայաստանում սանիտարական աղբավայրեր չկան, իսկ առկա աղբավայրերն ավելի շատ աղբի թաղման վայրեր են, որտեղ տեղի է ունենում աղբի բաց եղանակով, ցածր ջերմաստիճանային այրում: Ավելին, արդյունաբերական թափոնների համար չկան համապատասխան պոլիգոններ: Ներկայումս Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) Կոտայքի մարզում աղբավայրի կառուցման պիլոտային ծրագիր է իրականացնում, իսկ Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Արարատի մարզում է աղբավայրի կառուցման պիլոտային ծրագիր իրականացնում:

Չնայած Հայաստանում թափոնների ոլորտում իրականացվել են մի շարք կարևոր քայլեր, այդուհանդերձ որոշ բնագավառներում կա հետագա աշխատանքների կարիք, ներառյալ. (1) թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը, (2) թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրի հիմնումը, (3) թափոնների հեռացման վայրերի ռեեստրի ստեղծումը, և (4) թափոնների թաղման մասնագիտացված պոլիգոնների և աղբավայրերի հիմնումը:

Թափոն առաջացնող ձեռնարկությունների կողմից ինքնամոնիտորինգի ձևաչափը հաստատվել է ՀՀ ԲՊՆ նախարարի 2008թ.-ի դեկտեմբերի 16-ի թիվ 451-Ն հրամանով: Հաշվետվության մեկ օրինակը ներկայացվում է ՀՀ ԲՊՆ բնապահպանական պետական տեսչության (ԲՊՏ) համապատասխան տարածքային ստորաբաժանմանը: ԲՊՏ-ն, նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի աշխատակիցների հետ մեկտեղ, ստուգում է ներկայացված հաշվետվությունների ճշտությունը, ինչպես նաև դասակարգումները, ինչից հետո հաշվետվությունները ներկայացվում են ԱՎԾ: ՀՀ ԲՊՆ կողմից իրականացվում է թափոնների հաշվառումը՝ կազմակերպությունների կողմից ներկայացված «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև N 1-թափոն տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունների տվյալների հիման վրա:

Ինչ վերաբերում է համայնքային թափոններին, այն հանդիսանում է քաղաքապետարանների պատասխանատվությունը, սակայն այդ դեպքում ևս թափոնների պատշաճ մոնիտորինգ չի իրականացվում:

1.3.1. Քաղաքային թափոններ

ա.

Հաշվետվության մակարդակը	Պարտավորությունները
Ազգային	Տարեկան աշխատանքային ծրագրեր

բ.

Տվյալները տնօրինողները, տրամադրողները	Պատասխանատու կազմակերպությունները
ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	Ամբողջական տեղեկատվության տնօրինում
Քաղաքապետարաններ	Քաղաքապետարանների կոմունալ վարչություններ
Քաղաքային թափոնների հավաքի ու տեղափոխման համար պատասխանատու իրավաբանական անձիք	Համապատասխան իրավական անձիք

գ.


Տվյալների ձևաչափեր և լեզու	Մատչելիություն և փոխանակման իրավունք
ՀՀ ԱՎԾ հայերեն լեզվով ներկայացվող հաշվետվություններ	Ամփոփ տեղեկատվությունը մատչելի է ըստ քաղաքային բնակավայրերի

դ.

Ժամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
Տարեկան	Երկրի մակարդակով, ըստ առանձին քաղաքների

Եզրակացություն: Քաղաքային թափոնների տվյալները կարող են փոխանակվել ՇՄԵԳ հետ առկա տվյալների և ՇՄԵԳ ձևաչափերի համատեղելիության և համապատասխան ծրագրային ապահովման դեպքում:

ե. Ստորև ներկայացված է տվյալների հոսքի շղթայի սխեմատիկ պատկերը



զ.

Տվյալների փոխանակման իրավական հիմքերը միջազգային կոնվենցիաների և միջպետական պայմանագրերի ներքո երկրի ստանձնած պարտավորություններն են, ինչպես նաև համապատասխան բնագավառի օրենսդրությունն ու կանոնակարգերն են:

է.

Երկրի մակարդակով տվյալների հոսքերի զարգացման ու ՇՄԵԳ-ի հետ տվյալների փոխանակման մեթոդական ու տեխնիկական հոգրությունների զարգացման հիմնական կարիքներն առնչվում են հետևյալ բացերին.

- Գյուղական համայնքներն ընդգրկված չեն հաշվառման մեջ,
- Քաղաքային թափոնների տեսակային կազմն ու բաղադրությունը չի հատկորոշվում,
- Բացակայում է թափոնների թաղման վայրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:

1.4. Ջրի որակ

Հայաստանում մակերևութային ջրերի որակի մոնիտորինգի համար պատասխանատու գերատեսչություն է համարվում ՇՄՆՄԿ-ն: Երևանի կենտրոնական գրասենյակը լավ կահավորված է 12 համակարգիչներով: ՇՄՆՄԿ-ն ունի երկու տարածքային լաբորատորիա՝ Վանաձորում (Հյուսիսային գետավազան) և Կապանում (Հարավային գետավազան), ինչպես նաև երկու տարածքային գրասենյակ Գյումրիում (Ախուրյանի գետավազան) և Սևանում (Սևանա լճի ավազան) պլանավորվում է բացել մոտ ապագայում: Յուրիքնաչյուր տարածքային գրասենյակ կունենա կոմպլեքս լաբորատորիա, որտեղ կիրականացվի քիմիական անալիզ: Ներկայումս ՇՄՆՄԿ-ն ունի 2 կոմպլեքս լաբորատորիա (օդ, հող և ջուր) և 1 օդի լաբորատորիա: Աշխատակիցների թիվը 52 է, ինչպես նաև կան 10 կամավորներ:

Պատմականորեն երկրում ջրի որակի մոնիտորինգը կրել է էական փոփոխություններ: 1992թ.-ից հետո ջրի որակին առնչվող միջոցառումները էապես կրճատվեցին: 1994թ.-ից մակերևութային ջրի որակի մոնիտորինգը Հայաստանում փաստացի դադարեցվեց: Ուստի այդ ժամանակահատվածի ջրի որակի պարամետրերի դինամիկան հնարավոր չէ վերլուծել: 1998թ.-ին իրականացվել է միայն 55 նմուշառում, ինչը չէր բավարարում Խոբիրդային ստանդարտներին: 1988-2004թթ.-ներին տարեկան իրականացվել է 55-275 նմուշառում 79-82 դիտակետերից: Այդուհանդերձ, իրավիճակը էապես բարելավվեց՝ սկսած 2003-2004 թվականներից: Պետբյուջեից ֆինանսավորումը էապես ավելացավ սկսած 2004թ.-ից (պետբյուջեից ֆինանսավորումը 2004թ.-ին կազմում էր 32,000 ԱՄՆ դոլար, մինչդեռ 2007թ.-ին այն կազմում էր մինչև 250,000 ԱՄՆ դոլար): Ի լրումն, ԱՄՆ ՄԶԳ և ԵՄ տարբեր ծրագրեր տրամադրել են ժամանակակից լաբորատոր սարքավորումներ (օրինակ՝ սպեկտրոմետր, քրոմատոգրաֆ, ջրի որակի շարժական դաշտային սարքավորումներ), իսկ ջրի որակի նմուշառման դիտակետերի թիվն ավելացավ և 2005թ.-ից դարձավ 131: 2006թ.-ին նախարարությունը պատվիրեց ՇՄՆՄԿ-ին հավաքագրել և վերլուծել ջրի 900 նմուշ: 2007թ.-ից ՇՄՆՄԿ-ն աշխատում է ամբողջական հզորությամբ և տարեկան վերցնում է 1,200 նմուշ 131 դիտակետից (տարեկան 6-12 նմուշ Յուրիքանյուր դիտակետից):

Ջրի որակի դիտարկվող տարրերի և պարամետրերի ցանկը սահմանվում է ՀՀ կառավարության որոշմամբ: Ներկայումս ՇՄՆՄԿ կողմից իրականացվող մակերևութային ջրերի որակի մոնիտորինգի ծրագիրը ներառում է ջրի որակի հետևյալ պարամետրերը.

- ջերմային պայմաններ՝ ջրի ջերմաստիճան,
- թթվածնային ռեժիմ՝ O_2 , թթվածնի հագեցվածություն, θ - η_5 , θ - Φ_{Cr} ,
- սննդանյութեր՝ $P_{\text{ընդ.}}$, PO_4 , NO_3 , $N_{\text{ընդ.}}$, NH_4 , NO_2 (2012թ.-ին ՇՄՆՄԿ-ն սկսել է վերլուծել ընդհանուր օրգանական ածխածինը, ընդհանուր կապված ազոտը)
- հանքայնացում՝ հանքայնացում, Cl^- , SO_4^{2-} , կարբոնատներ, հիդրոկարբոնատներ, ընդհանուր լուծվող մասնիկներ, կոշտություն, հաղորդականություն,
- թթվայնություն՝ pH,
- այլ պարամետրեր՝ լողացող մասնիկներ, գույն, ընդհանուր կախված մասնիկներ, սիլիկատ, Li, Na, K, Be, Mg, Ca, Sr, Ba, B, Se, F, Al, քլորինացված պեստիցիդ, նավթամթերքներ, բենզին,
- Ծանր մետաղներ՝ As, Cd, Pb, Mo, Ni, Cu, Zn, Fe, Mn, Sb, Mo, V, Ti, Cr, Co, Bi, Sn, Ag:

Նմուշառման հաճախականությունը տատանվում է տարեկան 7-12 անգամ: Դիտակետերի մեծ մասում նմուշառումն իրականացվում է ամիսը մեկ անգամ: Վերջին 2-3 տարիներին տարեկան վերցված նմուշների ընդհանուր թիվը կազմում է 1300-1500: Նմուշառման, տեղափոխման, նախնական մշակման և փորձագնման ընթացակարգերի շուրջ 95%-ը տեղի է ունենում համաձայն ISO և այլ միջազգային ստանդարտների:

Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնը մշակել է մակերևութային ջրերի որակի մոնիտորինգի տվյալների ստուգման և վավերացման հատուկ ընթացակարգ: Այս գործընթացը բաղկացած է հետևյալ քայլերից.

- Նմուշառման արձանագրությունը ներկայացվում է ջրի որակի մոնիտորինգի ծրագրի պետին:
- Համապատասխան շշերով նմուշները տրվում են վերլուծական խմբերից (սպեկտրաֆոտոմետրիկ, քրոմատոգրաֆիկ, ֆիզիկաքիմիական) Յուրաքանյուրին և գրանցվում են գրանցամատյանում:
- Դաշտային չափումների տվյալները ջրի մոնիտորինգի ծրագրի պետի կողմից փոխանցվում են ջրի որակի մոնիտորինգի տվյալների բազա:
- Վերլուծական 3 խմբերի մասնագետները, որոնք հանդիսանում են հատուկ փորձագնումների մասնագետներ, իրականացնում են մակերևութային ջրերի նմուշների վերլուծությունը: Յուրաքանյուր անալիտիկ մեթոդի համար հատկացված է երկու մասնագետ և առանձին համակարգիչ՝ տվյալների զարգացման և մշակման համար: Բոլոր 3 անալիտիկ խմբերում

դաշտային չափումների արդյունքները չափիչ սարքավորումներին կցված օժանդակ սարքերի միջոցով մուտքագրվում են համակարգչային բազա և պահվում են այնտեղ: Ինչ վերաբերում է քիմիական փորձագնումներին, ապա դրանք գրանցվում են գրանցամատյաններում և այնուհետև փոխանցվում այդ նպատակով հատկացված համակարգիչ: Տվյալների փոխանցումից հետո իրականացվում է փորձագիտական գնահատական:

- Ջրի մոնիտորինգի ծրագրի պետը և փորձագնում իրականացրած մասնագետները համատեղ ստուգում են սարքավորումների և անալիտիկ մեթոդի ստուգաչափման բնութագրերը: Համոզվելով տվյալների ճշգրտության մեջ՝ տվյալները էլեկտրոնային կրիչների վրա՝ MS Excel ֆորմատով փոխանցում են տեղեկատվական բաժնի պետին:
- Նմուշառման արդյունքներն ստանալուց և դրանք հատուկ հատկացված համակարգիչ մուտքագրելուց հետո տեղեկատվական բաժնի պետը համապատասխան լրացումներ է անում տվյալների ընդհանուր բազայում: Տվյալների բազան MS Excel ֆորմատով է: Կրկնօրինակը նաև պահվում է MS Access ֆորմատով: Տվյալների բազայում կան մի շարք մակրոներ, ֆիլտրեր և ծրագրեր, որոնք թույլ են տալիս իրականացնել տվյալների նախնական վերլուծություն՝ համեմատելով դրանք առկա ստանդարտների հետ կամ համեմատելով տվյալ տարվա նախորդ ամսվա կամ նախորդ տարվա միևնույն ամսվա տվյալների հետ: MS Excel փաթեթում մշակվում են նաև գրաֆիկներ՝ ըստ հիդրոլոգիական սեզոնների, ինչպես նաև բազմամյա տվյալների գրաֆիկներ: Տեղեկատվական բաժնի պետն իրականացնում է տվյալների էքսպրես գնահատում, ներառյալ գնահատումը, թե արդյո՞ք տրված պարամետրերի արժեքները որոշակի միջակայքի սահմաններում են, արդյո՞ք պարամետրի արժեքը բնութագրական է նմուշառման տվյալ դիտակետի համար և այլն:
- Ջրի մոնիտորինգի ծրագրի պետի հետ համատեղ՝ տեղեկատվական բաժնի պետը, հավաստիանալով, որ տվյալները հուսալի են, էլեկտրոնային կրիչով ներկայացնում է տվյալները MS Excel ֆորմատով ՇՄՆՄԿ տնօրենի տեղակալին: Տվյալների համատեղ քննարկումից հետո բաժինն իրականացնում է տվյալների վիճակագրական վերլուծություն:
- Տեղեկատվական բաժինը նաև հաշվարկում է տարեկան և ամսական միջինները, համեմատում է հատուկ պարամետրերի միջին արժեքները և հարակից ստանդարտները: Վերլուծության արդյունքում տեղեկատվության բաժինը մշակում է ամսական տեղեկագրեր: Այս ամսական տեղեկագրերում ներկայացվում է տվյալ ամսվա մակերևութային ջրերի որակի համառոտ վերլուծությունը՝ ըստ առանձին գետավազանների: Ջրի որակի գործող ստանդարտներից շեղման ցանկացած դեպք ներկայացվում է առանձին:

2006թ.-ին մշակվել է ջրի որակի մոնիտորինգի տվյալների բազա՝ նպատակ ունենալով ներառել ՇՄՆՄԿ ինչպես ստատիկ, այնպես էլ դինամիկ տվյալները: Ստատիկ տվյալները բաղկացած են Հայաստանի 131 մշտապես գործող և 90 ժամանակավորապես գործող ջրի որակի նմուշառման դիտակետերի ֆիզիկական և տեխնիկական բնութագրերից, ներառյալ՝ աշխարհագրական կոորդինատները: Դինամիկ տվյալները ներկայացնում են մոնիտորինգի Յուրաքանչյուր նմուշառման կետում մակերևութային ջրերի քիմիական վիճակի ժամանակային շարքերը:

1.4.1. Գետերում ԹԿՊ_s –ի կոնցենտրացիա

ա.

Հաշվետվության մակարդակը	Պարտավորությունները
Ազգային	ՀՀ ԲՊՆ ՇՄՆՄԿ տարեկան աշխատանքային պլան և տարեկան աշխատանքների հաշվետվություն ՀՀ բնապահպանության նախարարին
Տարածաշրջանային	2012թ. ի վեր Արաքս գետում ջրի որակի Հայ-Իրանական համատեղ մոնիտորինգի տվյալների պարբերական փոխանակում
Միջազգային	ՄԱ ԿՓՇԿ հաշվետու լինելու պարտավորությունները

Բ.

Տվյալները տնօրինողները, տրամադրողները	Պատասխանատու կազմակերպությունները
<p>ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող</p>	<p>ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանական վիճակագրության բաժին. բաժնի պետ Նելի Բաղդասարյան հեռ. (+374-10) 52-45-14 Էլ. փոստ. nelli@armstat.am</p> <p>Աշխատանքները համակարգող` ՀՀ վիճակագրության պետական խորհրդի բնապահպանական վիճակագրությունը համակարգող անդամ` Յուրի Պողոսյան հեռ. (+374-10) 52-46-18 Էլ. փոստ. yupoghosyan@armstat.am</p> <p>0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն Հեռ. (+37410) 52-33-56 Ֆաքս. (+37410) 52-19-21 Էլ. փոստ info@armstat.am կայք էջեր` http://www.armstat.am (հայելային կայք էջ` http://www.armstat.info), http://www.armstatbank.am, http://www.armdevinfo.am</p>
<p>ՀՀ ԲՊՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն». Տվյալների տրամադրող միջազգային մակարդակում</p>	<p>Ալինա Զուռնայան Մակերևութային ջրի որակի մոնիտորինգի ծրագրի համակարգող, «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ, ք.Երևան, Կոմիտաս 29, 3-րդ հարկ Հեռ. (+374-10) 26-13-94 Էլ փոստ. A.Zurnachyan@yahoo.com Վեբ կայք. http://www.armmonitoring.am</p>

Գ.

Տվյալների ձևաչափեր և լեզու	Մատչելիություն և փոխանակման իրավունք
<p>Ազգային և օգտագործողին բնորոշ հաշվետվության ձևաչափեր</p> <ol style="list-style-type: none"> ամսական տեղեկագրեր, Word, PDF, թղթային տարբերակ (հայերեն) տարեկան տեղեկագրեր, Word, PDF, թղթային տարբերակ (հայերեն) տարեկան ամփոփագիր, Word, PDF, թղթային տարբերակ (հայերեն) xls աղյուսակներ (հայերեն) xls գրաֆիկներ (հայերեն) օգտագործողին բնորոշ 	<p>Ազգային և օգտագործողին բնորոշ հաշվետվություն</p> <ol style="list-style-type: none"> բաց մատչելիություն բաց մատչելիություն մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին կառույցների համար մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին ստորաբաժանումների համար / վճարովի ծառայություն մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին ստորաբաժանումների համար/ վճարովի ծառայություն վճարովի ծառայություն
<p>Տարածաշրջանային հաշվետվության ձևաչափեր. Արաքս գետի Հայ-իրանական համատեղ մոնիտորինգի տվյալներ</p>	<p>Տարածաշրջանային հաշվետվության ձևաչափեր. Արաքս գետի Հայ-իրանական համատեղ մոնիտորինգի տվյալներ</p>


1. word աղյուսակներ, xls գրաֆիկներ և դիագրամներ (անզլերեն)	1. Սահմանափակ մատչելիություն (սահմանվում է պետական գաղտնիությամբ)
2. եռամսյակային հաշվետվություն Word, թղթային տարբերակ (հայերեն)	2. մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին ստորաբաժանումների համար
3. տարեկան հաշվետվություն Word, թղթային տարբերակ (հայերեն)	3. մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին ստորաբաժանումների համար
4. տարեկան վերլուծություն Word, թղթային տարբերակ (հայերեն)	4. Սահմանափակ մատչելիություն (սահմանվում է պետական գաղտնիությամբ)

դ.

Ժամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
1. տարեկան / տվյալները հավաքագրվում են, հասանելի են ու կարող են փոխանակվել	1. 6 ջրավազանների, 14 գետավազանների 35-55 ջրային օբյեկտների 130 դիտակետերից ստացված ջրի որակի մոնիտորինգի տվյալները ամենամյա տեղեկանքների տեսքով մատչելի են բոլորի համար:
2. ամսական / տվյալները հավաքագրվում են, հասանելի են ու կարող են փոխանակվել	2. 6 ջրավազանների, 14 գետավազանների 35-55 ջրային օբյեկտների 130 դիտակետերից ստացված ջրի որակի մոնիտորինգի տվյալները ամենամսյա տեղեկանքների տեսքով մատչելի են բոլորի համար:

Եզրակացություն: Գետերում ԹԿՊ₅ –ի կոնցենտրացիաների տվյալները կարող են փոխանակվել ՇՄԵԳ հետ առկա տվյալների և ՇՄԵԳ ձևաչափերի համատեղելիության և համապատասխան ծրագրային ապահովման դեպքում:

ե. Ստորն ներկայացված է տվյալների հոսքի շղթայի սխեմատիկ պատկերը



զ.

Միջազգային կազմակերպությունների հետ տվյալների փոխանակման հիմնական ինստիտուցիոնալ կառույցը ՀՀ ԲՊՆ է, որն հանդիսանում է տեղեկատվության տրամադրման լիազորված մարմին: Տվյալների փոխանակման իրավական հիմքերը միջազգային կոնվենցիաների և միջպետական պայմանագրերի ներքո երկրի ստանձնած պարտավորություններն են, ինչպես նաև համապատասխան բնագավառի օրենսդրությունն ու կանոնակարգերն են:

Երկրի մակարդակով տվյալների հոսքերի զարգացման ու ՇՄԵԳ-ի հետ տվյալների փոխանակման մեթոդական ու տեխնիկական հզորությունների զարգացման հիմնական կարիքները համապատասխան ֆինանսական ու տեխնիկական միջոցների բացակայությունն է, ինչպես նաև վերապատրաստված աշխատակիցների պակասն է: Ավելի բնորոշ կարիքներն են.

- Միջլաբորատոր անալիտիկ միջանկյալ տվյալների բազաների ստեղծումը,
- Գործող ջրի որակի տվյալների բազայի ֆունկցիաների ընդլայնումը և ներդաշնակեցումն է միջլաբորատոր միջանկյալ տվյալների բազաների հետ,
- «Դաշտային և լաբորատոր սարքավորումներից ստացվող տվյալների դեպի տվյալների բազա հոսքն ապահովող ծրագրերի մշակումը կամ ձեռք բերումը է,
- Տվյալների բազայի ճկնության և մատչելիության ապահովումն է ՊՈԱԿ-ի լաբորատորիաների և տեղեկատվության բաժնի միջև,
- Տվյալների բազաների հետ աշխատանքի վերապատրաստան դասընթացներն են:

1.4.2. Գետերում ամոնիումային ազոտի կոնցենտրացիա

1.4.3. Ջրային մարմիններում (լճեր, ջրամբարներ) նիտրատի կոնցենտրացիա

1.4.4. Ջրային մարմիններում ընհանուր ֆոսֆորի կոնցենտրացիա

ա.

Հաշվետվության մակարդակը	Պարտավորությունները
Ազգային	ՀՀ ԲՊՆ ՇՄՆՄԿ տարեկան աշխատանքային պլան և տարեկան աշխատանքների հաշվետվություն ՀՀ բնապահպանության նախարարին
Տարածաշրջանային	2012թ. ի վեր Արաքս գետում ջրի որակի Հայ-Իրանական համատեղ մոնիտորինգի տվյալների պարբերական փոխանակում
Միջազգային	ՄԱ ԿՓՇԿ հաշվետու լինելու պարտավորությունները

բ.

Տվյալները տնօրինողները, տրամադրողները	Պատասխանատու կազմակերպությունները
ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	<p>ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանական վիճակագրության բաժին. բաժնի պետ Նելի Բաղդասարյան հեռ. (+374-10) 52-45-14 էլ. փոստ. nelli@armstat.am</p> <p>Աշխատանքները համակարգող` ՀՀ վիճակագրության պետական խորհրդի բնապահպանական վիճակագրությունը համակարգող անդամ` Յուրի Պողոսյան հեռ. (+374-10) 52-46-18 էլ. փոստ. yupoghosyan@armstat.am</p> <p>0010, Երևան, Կառավարական 3-րդ շենք ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն Հեռ. (+37410) 52-33-56 Ֆաքս. (+37410) 52-19-21 էլ. փոստ info@armstat.am կայք էջեր` http://www.armstat.am (հայելային կայք էջ` http://www.armstat.info), http://www.armstatbank.am, http://www.armdevinfo.am</p>
ՀՀ ԲՊՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն».	Ալինա Զուռնայան Մակերևութային ջրի որակի մոնիտորինգի

Տվյալների տրամադրող միջազգային մակարդակում	Ծրագրի համակարգող, «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ, ք.Երևան, Կոմիտաս 29, 3-րդ հարկ Հեռ. (+374-10) 26-13-94 Էլ փոստ. A_Zurnachyan@yahoo.com Վեբ կայք. http://www.armmonitoring.am
--	--

Գ.


Տվյալների ձևաչափեր և լեզու	Մատչելիություն և փոխանակման իրավունք
Ազգային և օգտագործողին բնորոշ հաշվետվության ձևաչափեր 1. ամսական տեղեկագրեր, Word, PDF, թղթային տարբերակ (հայերեն) 2. տարեկան տեղեկագրեր, Word, PDF, թղթային տարբերակ (հայերեն) 3. տարեկան ամփոփագիր, Word, PDF, թղթային տարբերակ (հայերեն) 4. xls աղյուսակներ (հայերեն) 5. xls գրաֆիկներ (հայերեն) 6. օգտագործողին բնորոշ	Ազգային և օգտագործողին բնորոշ հաշվետվություն 1. բաց մատչելիություն 2. բաց մատչելիություն 3. մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին կառույցների համար 4. մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին ստորաբաժանումների համար / վճարովի ծառայություն 5. մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին ստորաբաժանումների համար/ վճարովի ծառայություն 6. վճարովի ծառայություն
Տարածաշրջանային հաշվետվության ձևաչափեր. Արաքս գետի Հայ-իրանական համատեղ մոնիտորինգի տվյալներ 1. word աղյուսակներ, xls գրաֆիկներ և դիագրամներ (անգլերեն) 2. եռամսյակային հաշվետվություն Word, թղթային տարբերակ (հայերեն) 3. տարեկան հաշվետվություն Word, թղթային տարբերակ (հայերեն) 4. տարեկան վերլուծություն Word, թղթային տարբերակ (հայերեն)	Տարածաշրջանային հաշվետվության ձևաչափեր. Արաքս գետի Հայ-իրանական համատեղ մոնիտորինգի տվյալներ 1. Սահմանափակ մատչելիություն (սահմանվում է պետական գաղտնիությամբ) 2. մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին ստորաբաժանումների համար 3. մատչելի է ՀՀ ԲՊՆ ներքին ստորաբաժանումների համար 4. Սահմանափակ մատչելիություն (սահմանվում է պետական գաղտնիությամբ)

Դ.

Ժամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
1. Տարեկան տվյալներն ազատ մատչելի են ու կարող են փոխանակվել 2. Ամսական տվյալները հավաքագրվում են հիմնականում երկրի ներսում օգտագործելու համար 3. Օրական տվյալները հրապարակվում են միայն տեղային մակարդակում	1. Հիմնական գետերի մասին տվյալները մատչելի են և կարող են ազատ փոխանակվել 2. Հիմնական գետերի մասին տվյալները հնարավոր է փոխանակել 3. Տվյալները մատչելի չեն Մի շարք գետերի համար չափումները կատարվում են պայմանագրային սկզբունքներով.

Եզրակացություն: Գետերում ամոնիումային ազոտի կոնցենտրացիաների, ջրային մարմիններում նիտրատի կոնցենտրացիաների, ինչպես նաև ջրային մարմիններում ընդհանուր ֆոսֆորի կոնցենտրացիաների տվյալները կարող են փոխանակվել ՇՄԵԳ հետ առկա տվյալների և ՇՄԵԳ ձևաչափերի համատեղելիության և համապատասխան ծրագրային ապահովման դեպքում:

ե. Ստորև ներկայացված է տվյալների հոսքի շղթայի սխեմատիկ պատկերը



զ. Միջազգային կազմակերպությունների հետ տվյալների փոխանակման հիմնական ինստիտուցիոնալ կառույցը ՀՀ ԲՊՆ է, որն հանդիսանում է տեղեկատվության տրամադրման լիազորված մարմին: Տվյալների փոխանակման իրավական հիմքերը միջազգային կոնվենցիաների և միջպետական պայմանագրերի ներքո երկրի ստանձնած պարտավորություններն են, ինչպես նաև համապատասխան բնագավառի օրենսդրությունն ու կանոնակարգերն են:

է. Երկրի մակարդակով տվյալների հոսքերի զարգացման ու ՇՄԵԳ-ի հետ տվյալների փոխանակման մեթոդական ու տեխնիկական հզորությունների զարգացման հիմնական կարիքները համապատասխան ֆինանսական ու տեխնիկական միջոցների բացակայությունն է, ինչպես նաև վերապատրաստված աշխատակիցների պակասն է: Ավելի բնորոշ կարիքները տրված են սույն զեկույցի 1.4.1 բաժնում:

1.5. Կենսաբազմազանություն

Ճաունայի և ֆլորայի, բնության հատուկ պահպանվող տարածքների՝ ներառյալ անտառները, պահպանությունը և կայուն օգտագործման կառավարումը իրականացվում է կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կողմից, մասնավորապես ՀՀ բնապահպանության նախարարության կենսաբազմազանության քաղաքականության բաժնի, կենսառեսուրսների կառավարման գործակալության, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության համար պատասխանատու 8 ՊՈԱԿ-ների կողմից: Բնության հատուկ պահպանվող տարածքներում չներառված անտառների պահպանությունը և օգտագործումը ՀՀ գյուղատնտեսության նախարարության իրավասության շրջանակներում է, որը նման գործառնություններն իրականացնում է անտառբուծության բաժնի և “Հայանտառ” ՊՈԱԿ-ի կողմից: Վերոնշյալ ոլորտների պահպանության և օգտագործման պետական իրավակիրարկումն իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից:

Վերոնշյալ ստորաբաժանումները ապահովում են ֆաունայի և ֆլորայի մոնիտորինգի ընթացակարգերը, ինչպես նաև տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը, գնահատումը, ամփոփումը և տվյալների փոխանակման ապահովումը: Այս ամենն իրականացվում է՝ համաձայն “Բուսական աշխարհի մասին”, “Կենդանական աշխարհի մասին”, “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” օրենքների և ՀՀ Անտառային օրենսգրքի, ինչպես նաև համապատասխան կանոնակարգերով և ենթաօրենսդրական ակտերով:

Այդուհանդերձ, մոնիտորինգի, տվյալների հոսքի և տեղեկատվության փոխանակման իրականացման պահանջները և ընթացակարգերը, ներառյալ միջգերատեսչական համագործակցությունը, վերոնշյալ իրավական ակտերում ամբողջովին ներառված չեն: ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալությունը ֆլորայի և ֆաունայի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների կադաստրերի վարման պետական լիազոր մարմինն է: Այդ կադաստրերը գործում են միայն թղթի վրա և տեխնիկական մեխանիզմ/տեղեկատվական համակարգ առ այսօր չկա, ինչը բացատրվում է պետական բյուջեից համապատասխան հատկացումների բացակայությամբ: Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգում ֆաունայի և ֆլորայի վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվություն ներառելու նպատակով որպես առաջին քայլ անհրաժեշտ է գործառնական դարձնել վերոնշյալ կադաստրերը, ինչպես նաև ընդունել շահագրգիռ գերատեսչությունների և հանրության միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգեր:

1.5.1. Բնության հատուկ պահպանվող տարածքներ (ըստ կատեգորիաների)

ա.

Հաշվետվության մակարդակը	Պարտավորությունները
Ազգային	ՀՀ ԲՊՆ Կենսառեսուրսների կառավարման գործակալության տարեկան աշխատանքային պլան և տարեկան աշխատանքների հաշվետվություն` ՀՀ բնապահպանության նախարարին ՀՀ ԳՆ Հայանտառ ՊՈԱԿ-ի տարեկան աշխատանքային պլան և տարեկան աշխատանքների հաշվետվություն` ՀՀ գյուղատնտեսության նախարարին
Միջազգային	Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի, Ռամսարի կոնվենցիայի և ԿՓՇԿ-ի ներքո հաշվետու լինելու պարտավորություններ

բ.

Տվյալները տնօրինողները, տրամադրողները	Պատասխանատու կազմակերպությունները
ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. ազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանական վիճակագրության բաժին. բաժնի պետ Նելի Բաղդասարյան հեռ. (+374-10) 52-45-14 Էլ. փոստ. nelli@armstat.am Աշխատանքները համակարգող` ՀՀ վիճակագրության պետական խորհրդի բնապահպանական վիճակագրությունը համակարգող անդամ` Յուրի Պողոսյան հեռ. (+374-10) 52-46-18 Էլ. փոստ. yupoghosyan@armstat.am
ՀՀ ԲՊՆ Կենսառեսուրսների կառավարման գործակալություն. միջազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	Արտաշես Զիրոյան, ՀՀ ԲՊՆ կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ Երևան, 0010, Բյուզանդի փող. 1/3 Հեռ. (+374-10) 52-79-52 Էլ փոստ ziroyan@xter.net
ՀՀ ԳՆ “Հայանտառ” ՊՈԱԿ. միջազգային մակարդակում տվյալների տնօրինող ու տրամադրող	ՀՀ ԳՆ “Հայանտառ” ՊՈԱԿ, 0047, Երևան, Արմենակյան փող. 129 Հեռ. (+374-10) 65-17-38 Էլ հաւցե. arm_forest@yahoo.com

գ.

Տվյալների ձևաչափեր և լեզու	Մատչելիություն և փոխանակման իրավունք
PDF և Word ձևաչափով ազգային զեկույցներ հայերեն ու անգլերեն լեզուներով	Ազգային զեկույցները բաց ու մատչելի են
Միջազգային հաշվետվության ձևաչափեր. 1. Կենսաբազմազանության մասին կոնվենցիա 2. Ռամսարի կոնվենցիա 3. ՄԱ ԿՓՇԿ	Միջազգային հաշվետվության ձևաչափեր. 1. Կենսաբազմազանության ազգային զեկույցներ, թեմատիկ զեկույցներ, Ազգային ռազմավարություն և գործողությունների պլան. մատչելի են կոնվենցիայի պորտալում 2. Ռամսարի կոնվենցիայի պորտալ / գործում են քարտուղարության տվյալների փոխանակման կանոնները 3. Երկրի հաղորդակցության զեկույցները մատչելի են ՄԱ ԿՓՇԿ-ի պորտալում


դ.

Ժամանակային ընդհանրացման մակարդակ	Տարածական ընդհանրացման մակարդակ
Միայն տարեկան / փոխանակվում են միջազգային մակարդակում	Երկրի մակարդակով, տեղանքին հատուկ / փոխանակվում են միջազգային մակարդակում

Ներկայումս Հայաստանի ԲՀՊՏ ցանցը զբաղեցնում է 387054.4 հեկտար տարածք, կամ երկրի ընդհանուր տարածքի 13%-ից քիչ ավելին: Ստորև բերված աղյուսակում ամփոփված են ՀՀ ԲՀՊՏ-ները ըստ տիպի ու դասի:

Բնության հատուկ պահպանվող տարածք/ IUCN դասակարգում	Քանակը	Ընդհանուր տարածքը (հա)	% երկրի տարածքից
Պետական արգելոց / (I դաս)	3	35439.6	1.19
Ազգային պարկ / (II դաս)	4	236802.1	7.96
Բնության հուշարձան / (III դաս)	232		
Պետական արգելավայր / (IV դաս)	26	114812.7	3.86
Ընդամենը		387054.4	13.01

ե. Ստորև ներկայացված է տվյալների հոսքի շղթայի սխեմատիկ պատկերը.



Եզրակացություն. ՇՄՏՄՀ կենսաբազմազանության տվյալների հավաքածուն հիմնականում ընդգրկում է այն տեղեկատվությունը, որը երկիրը ներկայացնում է Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի քարտուղարություն՝ ազգային ու թեմատիկ զեկույցների ձևով:

Առկա տվյալների փոխանակումը ՇՄՏՄ-ի հետ իրատեսական է: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ներկայում երկրում չի իրականացվում կենսաբազմազանության պարբերական մոնիտորինգ: 1988թ. ի վեր Հայաստանի բուսական ու կենդանական աշխարհի հաշվառում իրականացվել է միայն մեկ պետական արգելոցում և երեք ազգային պարկերում՝ այդ տարածքների կառավարման պլանների մշակման ընթացքում: Ներկայում իրականացվում է միայն Սևանա լճի ձկնային համակեցությունների հաշվառում: Բուսական ու կենդանական աշխարհի հաշվառման տվյալների պակասը, ինչպես նաև կենսաբազմազանության մոնիտորինգի բացակայությունը հանդիսանում են ՇՄԵԳ-ի միջոցով տվյալների հոսքի իրականացման հիմնական խոչընդոտը:

Գ.

Միջազգային կազմակերպությունների հետ տվյալների փոխանակման հիմնական ինստիտուցիոնալ կառույցը ՀՀ ԲՊՆ է, որն հանդիսանում է տեղեկատվության տրամադրման լիազորված մարմին: Տվյալների փոխանակման իրավական հիմքերը միջազգային կոնվենցիաների և միջպետական պայմանագրերի ներքո երկրի ստանձնած պարտավորություններն են, ինչպես նաև համապատասխան բնագավառի օրենսդրությունն ու կանոնակարգերն են:

Է.

Երկրի մակարդակով տվյալների հոսքերի զարգացման ու ՇՄԵԳ-ի հետ տվյալների փոխանակման մեթոդական ու տեխնիկական հզորությունների զարգացման հիմնական կարիքներն են.

- ՀՀ ԲՊՆ Կենսառեսուրսների կառավարման գործակալության վարման տակ գտնվող Հայաստանի բուսական աշխարհի պետական կադաստրի, կենդանական աշխարհի պետական կադաստրի ու ԲՀՊՏ-ների պետական կադաստրի համար համար տվյալների բազաների ստեղծումը,
- Երկրտեղեկատվական համակարգերի վրա հիմնված տեղեկատվական համակարգի ստեղծումը, որը կինտեգրի նշված տվյալների բազաների տեղեկատվությունը,
- Տվյալների բազաների ու ԱՏՀ հետ աշխատանքի վերապատրաստման դասընթացները:

1.6. Եզրահանգումներ տվյալների հավաքածուների վերաբերյալ

1. Հայաստանում առկա բոլոր 11 առաջնահերթ տվյալների հավաքածուներն ունեն միջազգայնորեն փոխանակվելու պոտենցիալ: Սակայն, տվյալների մանրամասնության մակարդակները տարբեր են: Ավելին, առկա է համապատասխան օրենսդրական ու ենթաօրենսդրական շրջանակների ընդունման կարիք, որոնցով կկարգավորվեն միջազգային կազմակերպությունների հետ տվյալների փոխանակման մեխանիզմները: ՀՀ Կառավարության որոշմամբ հնարավոր է սահմանել շրջակա միջավայրի տվյալների տրամադրման ու տեղեկատվության փոխանակման մեխանիզմները՝ միջազգային մակարդակում, ներառյալ ՇՄԵԳ-ը:
2. Հնարավորինս անհրաժեշտ է օգտագործել առկա հաշվետվությունների ներկայացման մեխանիզմները: Այսպես, 5 թեմատիկ ոլորտների պարագայում Հայաստանը հանդիսանում է 9 միջազգային կոնվենցիաների և 3 արձանագրությունների, ինչպես նաև 5 եվրոպական կոնվենցիաների ու 1 արձանագրության անդամ: Ի հավելումն, լինելով ԱՊՀ ՄՎԿ անդամ, Հայաստանը տարեկան ամփոփ տվյալներ է տրամադրում շրջակա միջավայրի վերաբերյալ:
3. Անհրաժեշտ է զարգացնել ազգային մակարդակում հաշվետվությունների ներկայացման ու տվյալների փոխանակման մեխանիզմները բոլոր 5 թեմատիկ ոլորտներին համար: Ներկայում Հայաստանում բացակայում է շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվական հոսքերի կառավարման օրենքով կարգավորման ենթակա պարտադիր պահանջը Բացակայում է նաև պետական կառավարման մարմինների միջև շրջակա միջավայրի տվյալների ու տեղեկատվության փոխանակման հստակ ընթացակարգերը: ՀՀ Կառավարության որոշմամբ հնարավոր է սահմանել ազգային մակարդակում շրջակա միջավայրի տվյալների տրամադրման ու տեղեկատվության փոխանակման մեխանիզմներ և ընթացակարգեր:

Գլուխ 2. ՇՄՏՄՀ-ին համադրելի ազգային համակարգերի մշակում

ՇՄՏՄՀ-ին համադրելի ազգային համակարգերի ներդրման աշխատանքների իրականացման նախապայմաններից են.

- համապատասխան օրենսդրության առկայությունը,
- համապատասխան ինստիտուցիոնալ կառույցների առկայությունը: Այն ենթադրում է՝
 - ՇՄՏՄՀ մաս կազմող գերատեսչական մարմիններում համապատասխան ստորաբաժանումների, աշխատանքային խմբերի կամ կոնտակտային անձանց առկայություն,
 - Տեղեկատվության գերատեսչական/վարչական կառավարման տեխնիկական համակարգերի, ներառյալ՝ համակարգչային ծրագրային առկայություն,
 - Սկզբնական տեղեկատվության հավաքագրման ամբողջական համակարգի առկայություն:

Հայաստանում ՇՄՏՄՀ-ի համակարգված իրականացման հիմնական խոչընդոտներ են.

- օրենսդրական դաշտի անկատարությունը,
- համապատասխան նորմատիվամեթոդական դաշտի անկատարությունը,
- գերատեսչական տեղեկատվական ռեգիստրների/բազաների ոչ ամբողջականությունը՝ ինչպես պահանջվող ցուցանիշների համացանկերի, այնպես էլ միասնական մեթոդաբանությունների, դասակարգիչների և ստանդարտների մասով,
- տեղեկատվության հավաքագրման տարբեր մեխանիզմների և գործիքների կիրառումը, ինչը որպես կանոն, խաթարում է միասնական հաշվետվողականության համակարգի կիրառումը,
- տարբեր վարչական ռեգիստրներում նույն ցուցանիշների հավաքագրման պրակտիկան, որն առաջացնում է աշխատանքների իրականացման ծախսերի արհեստական ավելացում,
- գործող բազաներում համապատասխան տեղեկատվության պակասը, հավաստիությունը, մատչելիությունն ու հասանելիությունը, տարածամասնակայությունը,
- առկա տեղեկությունների անհամադրելիությունը,
- երկրի էկոպորտալի բացակայությունը,
- անհրաժեշտ կադրերի անբավարարությունը՝ ինչպես տեղեկատվության հավաքագրման, այնպես էլ դրանց համակարգչային մշակման մասով,
- վարչական տեղեկատվության մշակման, տրամադրման, փոխանակման, համակարգչային, հաճախ իրար հետ չհարմոնիզացվող ծրագրային փաթեթների կիրառումը,
- ազգային մակարդակով զեկույցների, վերլուծականների, հաշվետվությունների կազմման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորման բացակայությունը, անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման և համապատասխան քանակական վերլուծականների ապահովման համար անհրաժեշտ մեթոդական ուղեցույցների ու ձևաչափերի պակասը, հաճախ նոր լրացուցիչ ռեսուրսների, միջոցների անհիմաստ ներդրումը, ժամանակի վատնումը և այլն:

Միննույն ժամանակ, Հայաստանում ՇՄՏՄՀ ներդրմանը խթանող երեք հիմնական գործոն կա, մասնավորապես. (1) համապատասխան ինստիտուցիոնալ կառույցները, (2) վարչական վիճակագրական հաշվետվությունների համակարգի առկայությունը, և (3) շրջակա միջավայրի մոնիտորինգի բնագավառում վերջին դրական զարգացումները:

Միննույն ժամանակ արդեն իսկ Հայաստանում առկա է բարելավված միջավայր ՇՄՏՄՀ-ին համադրելի ազգային համակարգերի մշակման համար: Առաջին գործոնը ՀՀ կառավարության պատրաստակամությունն է հետամուտ լինելու էլեկտրոնային կառավարման հետագա զարգացմանը: Դա կհանգեցնի տարբեր տվյալների հավաքածուներ տնօրինողների հաշվետվություններ ներկայացնելու պատասխանատվության հստակեցման ու տվյալների փոխանակման համակարգման բարելավմանը:

Ստորև ներկայացվող աղյուսակը ամփոփում է Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության կառավարման բնագավառում հնարավորությունները և թերությունները:

<i>Բնագավառ</i>	<i>Դրական ասպեկտներ</i>	<i>Բացասական ասպեկտներ</i>
Օրենսդրություն և ինստիտուցիոնալ շրջանակ	<ul style="list-style-type: none"> • ՇՄՏՄՆ-ի տեղակայման և պահպանման համապատասխան ինստիտուցիոնալ կառույցների առկայություն 	<ul style="list-style-type: none"> • շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ համապարփակ տվյալների բազայի չսահմանված գաղափարներ և բովանդակություն, • շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տարածման չկարգավորված մեխանիզմներ, • ճյուղային օրենսդրական դաշտի շրջանակներում բնապահպանական դրույթների բացեր • շահագրգիռ կազմակերպությունների միջև շրջակա միջավայրի տեղեկատվության փոխանակման վերաբերյալ կանոնակարգերի բացակայություն
Տեխնիկական կարողություններ	<ul style="list-style-type: none"> • շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների պետական մոնիտորինգի աշխատանքներում ներգրավված կազմակերպությունների կարողությունների հզորացում և տեխնիկական հագեցում 	<ul style="list-style-type: none"> • շրջակա միջավայրի տվյալների համապարփակ շտեմարանի բացակայություն, • շրջակա միջավայրի բնագավառում տեղեկատվական ցանցի բացակայություն, • շրջակա միջավայրի տվյալների էլեկտրոնային բազայի և թվայնացման բացակայություն, • բնապահպանական տեղեկատվության կառավարման անհրաժեշտ ժամանակակից սարքերի, սարքավորումների և ծրագրերի անբավարարություն կամ բացակայություն, • մոնիտորինգի սարքերի և սարքավորումների անբավարարություն, • մշտական տեխնիկական աջակցության և մոնիտորինգի սարքավորումների չափագրման անբավարարություն
Մոնիտորինգ	<ul style="list-style-type: none"> • Հայաստանում շրջակա միջավայրի մոնիտորինգի միասնական և ժամանակակից համակարգի ներդրում • բնապահպանական ազգային ցուցանիշների ամբողջական ցանկի մշակում և ընդունում • ՄԱԿ ԵՏՀ մոնիտորինգի ցուցանիշների կիրառում՝ համապատասխան օրենսդրական կարգավորմամբ 	<ul style="list-style-type: none"> • կենսաբանական մոնիտորինգի բացակայություն, • թափոնների հեռացման վայրերի մշտական մոնիտորինգի բացակայություն, • արդյունաբերական գործընթացների ժամանակ կազմակերպությունների կողմից ինքնամոնիտորինգի բացակայություն, • կենսաբազմազանության, ներառյալ անտառների, համակարգված մոնիտորինգի բացակայություն, • հողի աղտոտման մշտական մոնիտորինգի բացակայություն
Հաշվետվություններ	<ul style="list-style-type: none"> • վարչական վիճակագրական հաշվետվությունների համակարգի առկայություն, որն օգտագործում է միջազգային ստանդարտները և դասակարգման սխեմաները 	<ul style="list-style-type: none"> • հաշվետվությունների մասնատված համակարգերի առկայություն, • շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների բացակայություն, ներառյալ ՇՄՏՄՆ-ով սահմանված ազգային առաջնահերթությունները (ջուր, օդ, թափոններ)

Գլուխ 3. Միջոցառումների ծրագիր

ՇՄՏՄՀ ներդրումը հնարավոր է մի շարք քայլերի հաջորդական իրականացմամբ: Այդ քայլերը ներառում են ինչպես հարաբերականորեն կարճաժամկետ դյուրին գործողությունների, այնպես էլ երկարաժամկետ ու ռազմավարական նշանակության միջոցառումների իրականացում: Միջոցառումների մի մասը հնարավոր է իրականացնել զուգահեռաբար, իսկ մեկ այլ մասի համար նահրաժեշտ են քաղաքական կամք ու տեխնիկական լուծումներ:

Տեխնիկական օժանդակության առումով, Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. ՀՀ ԲՊՆ Կենսառեսուրսների կառավարման գործակալության ներքո Հայաստանի ֆլորայի կադաստրի, ֆաունայի կադաստրի ու ԲՀՊՏ-ների կադատրի վարման ապահովում
2. ՀՀ ԲՊՆ մթնոլորտային օդի քաղաքականության բաժնի ներքո գործող Ջերմոցային գազերի ազգային կադաստրի զարգացում
3. ՀՀ ԲՊՆ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ներքո գործող Ջրային պետական կադաստրի զարգացում
4. Շրջակա միջավայրի տեղեկատվական համակարգերի ու վիճակագրական տվյալների մեկտեղման նպատակով տեխնիկական գործիքների / համակարգչային ծրագրերի մշակում:

3.1 Տվյալների ընտրված հավաքածուների ՇՄԵԳ միջոցով փոխանակման համար առաջարկվող քայլեր

Հայաստանում ՇՄՏՄՀ ձևավորման և կառավարման մեխանիզմների մշակման ու կենսապահովման նպատակով առաջարկվում է իրականացնել ստորև բերված միջոցառումների ծրագիրը: Միջոցառումների մեծ մասի համար հնարավոր է ապահովել միաժամանակյա կամ զուգահեռ իրականացում: Գնահատվել է, որ տեխնիկական, վարչարարական ու ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում, ինչպես նաև քաղաքական կամքի դրսևորման պարագայում հնարավոր է ամբողջական գործընթացն ավարտել 4-6 տարվա ընթացքում:

<i>Միջոցառում</i>	<i>Տևողություն</i>
Շրջակա միջավայրի համակարգչային մոնիտորինգի և տեղեկատվական միասնական համակարգերի ներդրման համար տեղեկատվության հավաքագրման, մշակման, տրամադրման/ փոխանակման մեխանիզմների և գործիքների, մեթոդաբանությունների մշակում	1 տարի
Մոնիտորինգի, տվյալների հավաքագրման, պահպանման, գնահատման ու շրջակա միջավայրի հատկորոշված ինդիկատորներով հաշվետվությունների ներկայացման ունակությունների բարելավում, համապատասխան միջազգային կոնվենցիաներին	3-4 տարի
Համակարգված մոնիտորինգի իրականացման և միասնական տեղեկատվական համակարգի ներդրմանն անհրաժեշտ օրենքի և դրա կիրարկումն ապահովող գործիքների մշակում և ընդունում	3-4 տարի
Ցուցանիշների/ինդիկատորների համացանկի և գերատեսչական հասցեկան ցանկերի սահմանում՝ ամբողջականացման և կրկնողություններ թույլ չտալու համար	1-2 տարի (օրենքի ընդունումից հետո)

<i>Միջոցառում</i>	<i>Տևողություն</i>
Համապատասխան վարչական և պետական վիճակագրական հաշվառման հաշվետվային ձևերի և դրանց առնչվող մեթոդաբանական հարցերի կարգավորում	1-2 տարի
Տվյալների ավտոմատ մուտքագրման, մշակման, տրամադրման համար անհրաժեշտ միասնական կամ հարմոնիկ ծրագրային փաթեթների տրամադրում	1 տարի
Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգերի կատարելագործում, մասնավորապես ՇՄՏՄՀ առաձին բաղադրիչների մշակման համար մեթոդոլոգիական ուղեցույցերի տրամադրում	2-3 տարի
Մոնիտորինգի, տվյալների հավաքագրման, պահպանման, գնահատման, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման բնագավառում վերապատրաստման դասընթացների անցկացում	1-2 տարի
Էկոպորտալի և դրա բաղադրիչների ստեղծում, գործարկում, տեղեկատվության թարմացման/նորացման համակարգի ձևավորում	1 տարի

3.2 Հայաստանում ՇՄՏՄՀ կառուցվածքների ու համակարգերի զարգացման երկարաժամկետ կարիքներ

Հայաստանում շրջակա միջավայրի մասին տվյալները ստացվում են մոնիտորինգի, ազգային նպատակով տվյալների հավաքագրման ու հաշվետվությունների ներկայացման միջոցով, ինչպես նաև միջազգային կոնվենցիաների, համաձայնագրերի, երկկողմանի ու բազմակողմանի պայմանագրերի ներքո ստանձնած պարտավորությունների կատարման արդյունքում:

Երկարաժամկետ տեսանկյունից, ՇՄՏՄՀ սկզբունքների իրականացումը կարող է հանգեցնել հաշվետվությունների ներկայացման ավելի համակարգված մոտեցման: Այս պարագայում, ՇՄԵԳ-ի հետ շարունակական համագործակցությունը էական նշանակություն է ստանում: Այս համագործակցությունը պետք է նպատակաուղղված լինի Հայաստանում ՇՄՏՄՀ կառուցվածքների ու համակարգերի զարգացմանը, ինչին երկարաժամկետ կտրվածքով կարելի է հասնել հետևյալ միջոցառումների իրականացմամբ.

- Ազգային մակարդակում էլ. կառավարման համակարգի կատարելագործում;
- Շրջակա միջավայրի տարբեր տվյալների բազաների միջև աշխարհագրորեն տեղայնացման կապերի ստեղծում;
- Շրջակա միջավայրի մոնիտորինգի, վիճակագրության ու տվյալների հոսքերի ոլորտում միջգերատեսչական համագործակցության օպտիմալացում;
- Ազգային ու միջազգային առաջնահերթություններին ու կարիքներին համապատասխան ցուցանիշների համախմբերի որոշում: